



ՄԱԹԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ. Գանի մը խորհրդածուծիւններ վերջին անանկութեանց առթիւ... Բ. Բ.
ՏԵՂԱԳՐԱԿԱՆ. Լճուտն ՀՐԱՆՏ ԱՍՏՏՈՒԿ
ԿՐԹԱԿԱՆ. Մանկական պարտեղները Միացեալ Նահանգներում Ս. ՊԱՆԱՍԱՆԵԱՆ
ԱԶԳԱՅԻՆ. Հոգեհանգիստ Ներսէս Արքայանի ի Ծուլքստան գիւղ Մշտյ..... Ա. Հ.
ԲԱՆԱՍՏԵՂԱԿԱՆ. Զուարթնոյն ընդ Մանկան (ՌԸՊՈՒԼ) Թարգմ..... Ա. Հ.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱԹԱԹԱԿԱՆ ԼՐՈՑ. Արտաքին, Ներքին, Ազգային:
ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ. (ԿԶԱՎԻՇ ՏԸ ՄՕՆԹԷԲԷՆ) Թարգմ..... Մ. ԶՈՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ ԵՒ ՓԱԼԱՈՆՆԵՐՈՒ — տարեկան..... Կէս ոսկի Օսման.
» » վեցամսեայ..... Բառ » »
ՄԵԿ ԹԵՐԹԻՆ ԳԻՆՆ Է 60 փարայ
Օտար քաղաքաց համար տարեկան..... 12 Ֆրանք
» » վեցամսեայ..... 6 »
ԹՂԹԱՏԱՐՈՒԹԵԱՆ Ծախք տարեկան..... Դան. արծ. 15
վեցամսեայ 7 1/2

Մասիսի Խմբագրութեան ուղղեալ ո՛ր եւ է գրութիւն կամ անամակ պէտք է
ուղղել առ.

Խմբագրութիւն Արեւելք և Մասիս Լրագրաց
Ղալաթիա, Նորատուրկեան Ժան

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻՔ ԼՐԱԳՐՈՑ

1884

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիւ, 30 Նոյեմբեր

ԸՆԹԱՅԻ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

3 ամիս լոնտրայի վրայ (պանքային)	110
3 » » » (վճռահան)	109 5/8
3 » Բարիլէ » (պանքային)	22 95
» » » (վճռահան)	23 2 1/2

ԸՆԹԱՅԻ ԱՐԺԵԹՂԹՈՅ

Օսմանեան Բոնսոյիտէ

Երեկ երեկոյ գոցուեցաւ	դճին ...	9 8 1/2
Պօրային գոցուելէն վերջը	» ...	9 8
Բերայի մէջ	» ...	—
Առաւօտուն բացուեցաւ	» ...	9 9
Բարձրագոյն դին	» ...	9 9
Նուազագոյն	» ...	9 9
Կէս օրին	» ...	9 9
Իւնիֆիէ Եգիպտական (Գ. Կ.)		70 25
Երեկ իրիկուն գոցուեցաւ		70 25
Բերայի մէջ		—
Այս առտու բացուեցաւ Գ. Կ.		70 22 1/2
Կէս օրին		70 25
Հէվայէսիլ		40
Բերօր գոնսօլիտէի		—
» Իւնիֆիէի		—
Փոխառութիւն 1863	Ֆր. ...	76
» 1865	» ...	58
» 1869	» ...	51 50
» 1873	» ...	45 50
Պօն տիւ Թրէզոր	Անգլ. Լ.ր. ...	21 75
Բուսէլիի երկաթուղի	Ֆր. ...	45 125
Օպլիկասիոն ալ Բրիտիթէ	»	—
Բաժնեթուղթ Լաւրիօմի	»	68

ԲԱԺՆԵՏՈՐՍԻ

Սօսիթէ Ժէնէրալ	Անգլ. Լ.ր. ...	3 29
Գրէտի Ժէնէրալ (Գ. Կ.) ...	Օսմ. Լ.ր. ...	7 40
Պանք ալ Գ.սնս	» ...	5 30
Սօս. Շանժէ վալէօր	Օսմ. Լ.ր. ...	3 25
Թրամուէյ	» ...	285

ԸՆԲԱՅՐ ՊՐԱՄՈՑ

Օսմանեան ոսկի	դր. ...	100
20 ֆրանքնոց	» ...	87 35
Անգլիական ոսկի	» ...	110 20
Բօլ Իմբերիալ	» ...	89 35
Քրիմից	» ...	51 45
Ռուսի թղթադրամ	» ...	8 67
» արծաթ	» ...	89 30
Ֆիօրին	» ...	9 4
Մէճ. արծ. (տարբ.)	» ...	108 2
Վ. Եջնոց	» ...	402 35
Հինգնոց	» ...	402 35
Մէթալիք	» ...	98 40
Պղինձ	» ...	750
Թղթադրամ	» ...	3300

ԵՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 11 Դեկտեմբեր ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. քօնսօլիտէ գոցուեցաւ	99 11 1/16
Օսմ. բացուեցաւ	8 7 1/16
» գոցուեցաւ	8 1 1/2
Օսմ. փոխառութիւն 1865	11 3 1/4
» 1869	10 1 1/4
» 1871	69 1 1/4
» 1872	20 1 1/4
» 1873	9 1 1/4

Փոխառութիւն 1877	82
Պանք Օթօման	13 7 1/8
Ռուսական փոխառ. 73 (գ. Կ.)	95 3 1/8
Եգիպտական միացեալ (Իւնիֆիէ)	63 1 1/2
» առանձն. (Բրիտիթիէ)	88 1 1/4
այլա Սանիէ	62 1 1/2
Տօմանիալ (փոխառ. Բօլիլա)	88 1 1/4
Հունգարական պարտաթուղթ 1877 (անընթեռնիլ փոխանակութիւն Բարիլի վրայ)	

Վիեննա, 11 Դեկտեմբեր ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	123 75
Օսմանեան երկաթուղի	21 50

Բարիլ, 11 Դեկտեմբ. ժամ 3 վայր. 15 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0.....բաց	108 72 1/2
» 3 0/0.....բաց	79 45
Օսմանեան քօնսօլիտէ բացուեցաւ	8 57 1/2
» գոցու. (գ. Կ.)	8 62 1/2
» 1865	59
» 1869	52
» 1873	46

Օսմանեան երկաթուղի	46 25
» Իէթիի բաժնեթուղթ	520
Պանք Օթօման	603 75
Գրէտի Լիօնէ	527 50
» Ֆոնսիէ	1327 50
Բաժնետոմս Լիօնի (գուր. կտր.)	1240
Սուէզի ջրանցք	1886 25
Ռուսական 5 0/0 1877ի	100 5 1/4
Իտալական Ռանթ	98 77 1/2
Եգիպտական միացեալ գոց	323 75
Սպանիական (արտաքին)	60 3/8
Բրիտիթի Թիւք	391 25
5 0/0 Հելլենական	359 37 1/2
2 էք Լոնտրայի վրայ	25 34

ԲԱՐԻՋ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Դեկտեմբեր 11 ժ. 10, վ. 45

Ֆրանս. Ռանթ, 4 1/2 0/0.....	108 67 1/2
Օսմանեան »	8 60
Եգիպտական միացեալ	323 75

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

33րդ ՏԱՐԻ

1884 ԴԵԿՏԵՄԵՐ 1

ԹԻԻ 3746

Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն

ՔԱՆԻ ՄԸ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԵՐՋԻՆ ՍՆԱՆԿՈՒԹԵԱՆՅ ԱՌԹԻԻ

Մայրաքաղաքիս հրապարակին վրայ իրա-
րու յաջորդող սնանկութիւնք տնտեսական
երեսոյթ մ'են արժանի խորին ուշադրու-
թեան: Ընթերցող հետաքրքիր հասարակու-
թեան քով հակամիտութիւն մը կայ պէտք
եղածէն աւելի նշանակութիւն ընծայելու
այս կամ այն մասնաւոր վաճառատան ան-
ձուկ կացութեանը կամ առեւտրական դժ-
բաղդութեանն, և անտես ընելու այն ընդ-
հանուր պատճառներ որոց մասնական ար-
դիւնքն են այդ կարգի ցաւալի իրողու-
թիւններ: Քանի մը ամիսներէ հետէ լրա-
գրաց մէջ ծանուցուող սնանկութեանց պատ-
ճառները կրնանք երկու ընդհանուր կարգի
բաժնել: Ոմանք կը վերաբերին ուղղակի
Թուրքիոյ տնտեսական վիճակին, և ոմանք
Թուրքիայէն զատ նաեւ ուրիշ երկիրներու
վրայ դիտուած տնտեսական պայմաններու
վերաբերելի են: Համառօտիւ պիտի քննենք
այս երկու կարգ պատճառներ:—

Նկատելով միայն Թուրքիոյ տնտեսական
վիճակն, արդարեւ կը տեսնենք թէ այդ
սնանկութիւնք պէտք եղածէն աւելի պատ-
ճառ ունէին երկրին ընդհանուր վիճակին
մէջ: Անկարելի է ժխտել թէ ժողովուրդն
աղքատացած է, հետեւապէս առաջուան
չափ բան չի գներ վաճառականներէն, և
չի կրնար վճարել նախապէս գնած վաճառ-
ներէն դոյացեալ պարտքերը: Ժողովրդեան
աղքատանալուն նպաստած են երկու տար-

բեր իրողութիւններ: Նախ, վերջին պա-
տերազմն իւր բազմազան նիւթական վնաս-
ներով, և երկրորդ, ընդհանուր անյաջող պայ-
մաններն որք հեռի են ընձեռելէ ժողովրդ-
դային բարեկեցութեան միջոցներն՝ յառաջ
բերած են աղքատութիւն մը, մօտ ժամա-
նակներս նմանը չտեսնուած սաստկութեամբ:
Այս աղքատութիւն ընդհանուր է. երկրին
ամեն ազգէ և ամեն դասէ բնակչաց վրայ
կը տեսնուի համեմատապէս: Վերջին պա-
տերազմէն ժողովրդեան կրած նիւթա-
կան վնասներն յայտնի են: Այս պա-
տերազմ միլիոնաւոր ոսկեոց ծախք պահան-
ջեց, և ի հարկէ պիտի պահանջէր. ոչ ոք
առ այս առարկութիւն մը կարող է ընել.
Տէրութեան մը սրբազան սլարտաւորութիւնն
է ինքզինք պաշտպանել օտար Տէրութեան
մը անարդար յարձակմանց դէմ: Բայց
Թուրքիոյ պաշտպանութեան հարկ եղած մի-
լիոններն ուստի՞ց աւնուեցան: Միայն մէկ
անգամ Անդլիայէն փոքրիկ փոխառութիւն
մ'եղաւ 5 միլիոն անգլ. ոսկւոյ, որ ծանօթ
է Տէֆաֆա Լ. (Թուրքիոյ Պաշտպանութեան
Փոխառութիւն) անուամբ: Եւրոպացի դրա-
մատեարք, որ յառաջադոյն մեծապէս դիւ-
րացուցած էին Թուրքիոյ պատերազմական
արտասովոր և մինչեւ իսկ զինուորական հա-
սարակ ծախուց հայթայթումը՝ միլիոնաւոր
դումարներ փոխ տալով, Թուրքիոյ մեծ
ճշնաժամուռն մէջ աւելի դոււմար մը չուղե-
ցին վստահիլ: Արդիւնքն այն եղաւ որ պա-
տերազմին բոլոր բեռը Թուրքիոյ ժողո-
վուրդը պարտաւորեցաւ կրել յոյժ կարճ
Զոյժ Զ. Զ. Զ.: Նիւթ փոխառութիւնը կընուէին
ոչ ապաքէն դարձեալ Թուրքիոյ ժողովուրդը
պիտի վճարէր տոկոսն ու գլխամասն. —Ան-

չուշտ : Բայց եթէ քաղաքակիրթ երկիրնե-
րու մէջ փոխառութեանց գրութիւնն ըն-
դունուած է հանրային մեծ և արտասովոր
ծախուց հայթայթման համար , պատճառն
այս է որ անոնք միակ եղանակն են որով
երկրին ժողովուրդը ~~հալած~~ ~~առ~~ ~~հալած~~ , այս-
ինքն շատ մը տարիներու պայմանաժամու
մէջ կարող կը լինի տալ այդ արտասովոր
գումարներ , մինչ ծախքերը կարճ միջոցի մը
մէջ հարկ է վճարել : Յնթադրելով թէ
պատերազմ մը , որ կը տեւէ երկու տարի
միայն , պատճառէ 20 միլիոն ոսկեայ ծախք ,
տարբեր բան մ'է եթէ այս գումար անմի-
ջապէս առնուի արդէն ոչ-հարուստ ժո-
ղովրդէ մը , — որ այսու կրնայ գրկուիլ ո'չ
միայն իւր նախընթաց տարիներու ~~դէպք~~
շահերէն , այլ նաեւ հանապազօրեայ ապ-
րուստին հայթայթման պէտք եղած ~~հրաժար~~
քէնէն , — և ընդհակառակն , տարբեր բան
է եթէ նոյն գումար ձեռք բերուի 30 կամ
100 տարուց պայմանաժամու մէջ հատու-
ցանելի փոխառութեամբ մը : Ասով մասնա-
ւոր ժամանակի մը նիւթական բեռը , շատ
մը տարիներու վրայ բաշխուելով , համե-
մատապէս թեթեւ կուգայ ժողովրդեան ,
որ կրնայ իւր ընթացիկ դրամագլխոյ չա-
հովը փոքր առ փոքր վճարել զայն , փոխա-
նակ յանկարծական զոհողութեամբ իւր
դրամագլխին իսկ կորուսանելու աստիճան
աղքատանալու :

Այս վերջին պարագայ եղաւ սակայն երկ-
րին բաժինը պատերազմին մէջ : Թղթազբամը
նէրէն փոխառութիւն մ'էր անտուրու , և այն-
չափ աւելի ծանր նստաւ որչափ քիչ միջոցի
մէջ արժէքէ ինկաւ , մինչեւ որ ջնջուեցաւ
առանց փոխարինութեան : Կառավարու-
թիւնն անշուշտ չէր կրնար տարբեր տնօրի-
նութիւն մ'ընել . զի եթէ թղթազբամին
փոխարէնն հատուցանէր , պատերազմին
ծախքն ինչով պիտի փոխարինէր : Նմանօ-
րինակ հարկի մը առջեւ մէգալիքը կորոյս
իւր արժէքին կէսը : Կորուսեալ մասն ար-
դարեւ իրական արժէք մը չէր . բայց կը
ներկայացնէր վարկ մը յորմէ յանկարծ կը
զրկուէր ժողովուրդը : Նոյն դիտողութիւն
պղինձ դրամին համար , որ բոլորովին կը
վերնար : Եւ մինչ այսպէս դրամներն ար-
ժէքէ կ'իջնային , արոց վրայ յաւելումներ կը
լինէին , որոց պէտք կը տեսնէր Տէրութիւնը

բազմաճախ պատերազմի մը պատճառաւ
գատարկացած դանձր լցնելու համար : Տուր-
քեր կան որք կրկնապատկեցան , և նկատե-
լով թէ նոյն միջոցին ժողովրդեան ձեռքը
գտնուած մէգալիքին արժէքը կէս առ կէս
կը զնջուէր , նոյն տուրքեր իրօք քառապա-
տիկ կ'աւելնային : Եւ միթէ պատերազմը
նուա՞զ աղքատացուց ժողովուրդն , իրապէս
հողագործային երկրէ մը փոխ առնելով բիւ-
րուոր թեւեր , որք ո'չ եւս մշակութիւն կըր-
նային ընել , և շատ անգամ , փոխ առած
թեւերն հատուցանելով այնչափ միայն որ-
չափ թղթազբամը կը հատուցուէր . . . :

Արդ , կ'ըսենք թէ երկրին աղքատանա-
լուն մէկ պատճառն եղաւ վերջին պատե-
րազմն : Ուրիշ ընդհանուր պատճառ մ'է
բացակայութիւնն այն միջոցներու որք միայն
կրնան յառաջ բերել ժողովրդային բարե-
կեցութիւն մը : Եթէ պատերազմին վնաս-
ները տակաւին կը զգանք , պատճառն այն
է որ զանոնք դարմանելու միջոցները չու-
նէինք առատօրէն : Թէ հարստանալու միջոց-
ներն ունեցող ժողովուրդ մը ո'րչափ դիւ-
րաւ կը դարմանէ դառնաղէտ պատերազմի
մը թողած ամենէն խորին տնտեսական վէր-
քերն իսկ , Ծրանստ ամենախուռաւոր օրի-
նակ մ'է այսմ : Ըսինք թէ Թուրքիա իրա-
պէս հողագործ երկիր մ'է : Բայց հողային
բերքերն արժէք չեն կրնար ստանալ և հե-
տեւապէս հարստութիւն չեն կազմեր ցոր-
չափ փոխադրման միջոցներ չկան , և այս
պատճառաւ մեր երկրի ներքին գաւառաց
բերքերը մեծ նշանակութիւն չունին ժո-
ղովրդային հարստութեան տեսութեամբ :
Ռոտտոլոյց ցորենն աւելի սուղ կուգայ Կ.
Պոլիս , քան Ռումանիայէ և Ռուսիայէ : Բայց
Ռոտտոլոյց Բումբէլի մէջ է , այսինքն՝ փո-
խադրման միջոցներու կողմէ շատ աւելի
նպաստաւորեալ է տակաւին քան Փոքր Ա-
սիոյ գաւառներն : Երբ Ռոտտոլոյցի ցորենը
չի կրնար վաճառիլ Կ. Պոլսոյ հրապարակին
վրայ , դիւրին է դատաստան մ'ընել երկ-
րին այլ մասանց հողային բերքերուն ար-
ժէքին նկատմամբ : Երբ երկրի մը բերքերն
իւր կեդրոնական շուկայներ իսկ չեն կըր-
նար զրկուիլ , դիւրին է հասկնալ թէ ար-
տածութեամբ օտար հրապարակներու վրայ
ինչ արժէք կրնան ստանալ : Աղբիանու-
պոլսոյ վաճառականք ժամանակ մը մեծ քա-

նակութեամբ ցորեն կը զրկէին Մարսիլիա . բայց այսօր Հնդկաստանէն ցորեն աւելի աժան կուգայ Ֆրանսայի նաւահանգիստները , քան Թուրքիոյ եւրոպական գաւառներէն : Մշակութիւնն ո՛րչափ յառաջ պէտք է տարուած լինի Հնդկաստանի մէջ , փոխադրման միջոցներն ո՛րչափ կանոնաւորուած պէտք է լինին , որպէս զի Հնդկային Ուկէանոսէն , Կարմիր ծովէն , Սուէզի ջրանցէն և Միջերկրականէն անցնելով հնդկի ցորենն աւելի աժան գայ Մարսիլիա , քան օսմանեան ցորենն , որ Ֆրանսական հրապարակին բաղդատապէս ա՛յնչափ մօտ տեղ մը կը բուսնի : Բայց արմտիքէն զատ նաեւ ուրիշ հողային բերքերու կողմէ երկրին արտածութիւնը նուազելու վրայ են : Թուրքիոյ մէջ վիճակագիրք և թուանշանք միշտ տրամադրելի չեն , և այս է մեծ արդեւք մը տընտեսական տեսութիւններ ընելու . բայց վաճառականութեան վիճակին վրայ ընդհանուր ծանօթութիւն մը կը բաւէ հաստատելու թէ , այժմեայը (1887), ափիոնն և մեր ուրիշ քանի մը բերքեր մեծագոյն յաջողութեամբ կ'արտադրուին եւրոպական գաղթականութեանց մէջ , ուստից եւրոպական հրապարակներն աւելի աժան կը ստանան իրենց մթերքը քան Թուրքիայէն : Հանրածանօթ իրողութիւն մ'է թէ Էնկիւրիի այժմերն , հռչակաւոր իրենց մետաքսանան Բէֆֆէտով , զորս Անգլիացիք փոխադրած են Բարեյուսոյ գաղթականութիւնն , հոն սաստիկ մրցում մը կ'ընեն իրենց հարց և եղբարց դէմ որք մնացած են Գաղատիոյ հովիտներուն մէջ : Բայց պէ՞տք է բազմացնել օրինակներն : Փոքր Ասիոյ բերքերէն երբ մեք իսկ չատ չենք կրնար օգտիլ , ի՞նչ իրաւունք ունինք պահանջելու որ օտարադէր օգտին : Օրսան 6 էն 8 փարայի լաւ բաղադէս կ'արտադրի Սեբաստիոյ նահանգին մէջ . իսկ մեք կարօտ մնացած ենք Մալդայէ , Նաբոլիէ , Մարսիլիայէ , Կիպրոսէ և Վառնայէ բերուած բաղադէսին , զոր 30-45 փարայի հազիւ կրնանք գնել :

Արդ , երբ տուրքերը ծանր են պետական աննահանջելի պիտոյից պատճառաւ . երբ զանազան անուամբ հասարակութեան ձեռքը դանուած արժէքները չեն բանիր այլ եւս , և երբ , ի լրուսն չարեաց , ներքին բերքերը գին չեն կրնար ստանալ , ժո-

ղովուրդն անշուշտ կ'աղքատանայ , և աղքատ ժողովրդի մը հետ դործ ընող վաճառականք ի հարկէ կը սնանկանան , կամ առեւտրական ընդհանուր տագնապ մը կը կրեն : Բուսէլի ժողովրդն աւելի հարուստ էր . բայց Պուլիարիոյ , Տոպրուճայի , Պոսնա-Հէրսէքի և Արեւելեան Բուսէլիի դաւառաց հետ առեւտրական յարաբերութիւնը չատ նուազած կամ բոլորովին դադրած են քաղաքական վերջին դէպքերու պատճառաւ : Եթէ կառավարական նուազեալ եկամուտք Փոքուն Ասիոյ կողմէ կրնան փոխարինուիլ տրոյ վրայ աստիճանաւոր կամ յանկարծական յաւելումներով , առեւտրական վնասներն այնչափ առաձգական չեն որ ուրիշ կողմէ մը դիւրաւ կարենան դարմանուիլ : — Բայց ինչպէս առաջուց ըսինք , չաբաթէ ի չաբաթ ծանուցուող սնանկութիւնք միայն մեր երկրի տնտեսական անդոհացոյցից կացութենէն ծագում չեն առնուր : Կան ուրիշ աննպաստ պայմաններ , որք Թուրքիայէն զատ նաեւ ուրիշ երկիրներու վրայ կը դիտուին : Օրաթերթերու քաղաքական և արտաքին մասերն ուշադրութեամբ կարդացողներ կը յիշեն թէ եւրոպական ամեն վեճ ազգեր ընդհանրապէս կը դանդաւորին այժմ հոգաբարձական որոշումով , վաճառականութեան դադարումով , արտաբերող շուկան , և ի մի բան , տնտեսական ընդհանուր նեղութենէ մը : Տնտեսադէտք չատ մը վիճակագրեր քննելով գտած են թէ վաճառականութեան մէջ կայ իբր տասնամեայ չըջան մը , յորում դործերն հանդարտ վիճակէ մը կ'անցնին բանուկ վիճակի մը , ապա կը վայլին արտատուր դործունէութեամբ մը , վարկը կը հասնի իւր գաղաթնակէտ , և ապա յետաջընում մը կուգայ , յորում վարկը կը նուաղի , դործերը կը դադրին , և հետեւապէս սնանկութիւնք տեղի կ'ունենան : Նոյն չըջան յետոյ նորէն կը սկսի , և անհունապէս կը կրկնուի : Վաւեր չըջան կ'անուանի այս երեւոյթ : Արդ , Եւրոպիոյ տընտեսական վիճակը դիտելով , կը տեսնենք թէ հիմա վարկի չըջանին վերջին և անընդարձ ժամանակամիջոցին մէջ կը գտնուին դործերը : Նպաստաւոր յեղաշրջում մը անշուշտ պիտի վերսկսի : Բայց արդի տաղնապը չատ գէշ ազդեցութիւն ըրած է առեւտրական և սեղանաւորական մեծագոյն

տուներու վրայ իսկ, որոց սնանկութիւնը սաստիկ չի տրոհուած մը պատճառով են: Այդ վիճակ անշուշտ կը ներգործէ նաեւ Կ. Պոլսոյ հրապարակին վրայ:

Այս ընդհանուր երեւոյթէ զատ, կայ նաեւ անմիջական պատճառ մը վերջին սնանկութեանց: Այսօր ցորենի գինն յոյժ ինկած է Եւրոպոյ հրապարակաց վրայ. նմանապէս Գաղթաբէք հանրական անուամբ ծանօթ վաճառաց վրայ, որը մասամբ կամ ամբողջովին կը բերուն եւրոպական ազգաց «գաղթականութիւններէն», ինչպէս, խահուէ, շաքար, քարիւղ, ևայլն, գնոց ընդհանուր անկում մը կայ: Հետեւապէս, վաճառատուներ որք առատ միջերեւելի ունէին այս վաճառաց, ի հարկէ կրեցին մեծ վնասներ, և սնանկացան: Մայրաքաղաքիս հրապարակին վրայ ազդեցութիւն ընող մեծագոյն սնանկութիւնը, Սպարդալի յունական տան սնանկութիւնը, ցորենի գնոյն յոյժ զգալի անկման մը հետեւանք էր: Գնոց անկում մը, ընդհանրապէս, արդիւնք է արտադրութեան շատութեան, երբ համապատասխան սպառում չկայ, կամ վարկի նուազութեան, յորժամ վաճառականը կանխիկ կ'ուզեն վաճառել: Յորենի մասին, շատ ստոյգ է թէ արտադրութեան առատութիւն կայ. զի այսօր Միացեալ Նահանգներն և Հնդկաստան սատակապէս կը մրցին՝ մեծագոյն քանակութեամբ արմուիք տալու համար Եւրոպոյ: Գիտելով Եւրոպոյ մէջ արմուեաց այժմեան առատութիւնն ու աժանութիւնը, շատ զարմանալի է որ Կ. Պոլսոյ մէջ լաւագոյն տեսակ հացերն աւելի աժան չեն վաճառուիր: Այս միջոցիս յոյժ շահուորդ որք մը պէտք է լինի Թուրքիոյ մայրաքաղաքին հացադործաց առուտուրը միամիտ հատարակութեան մը հետ . . . :

Ամիսիկելով և վերջացնելով, կըսենք թէ մայրաքաղաքիս հրապարակին իրաւամբ յուզող սնանկութեանց պատճառ պէտք է նշուի տեսնելը. — Ա. Թուրքիոյ տնտեսական անդուհալեցիկ վիճակն, այսինքն՝ նիւթական բարեկեցութեան միջոցներն հայթայթելու դժուարութիւնն ընդհանրապէս, և վերջին պատերազմին պատճառով նիւթական և հողային վնասները մասնաւորապէս. և Բ. Եւրոպոյ մէջ անկող առեւտրական և ճարտարագործական տաղնապն ընդհանրապէս, և արմուեաց և գաղթաբէքներու վրայ գնոց անկումը մասնաւորապէս: — Այս նիւթոց վրայ նորէն զրեւու առիթ պիտի ունենանք:

Բ. Ք.

Տ Ե Ղ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Լ Օ Ն Տ Օ Ն

Մեծ. Հրանտ Է. Ֆ. Աստուր, որ իւր փաստաբանական քննութիւններն մեծ յաջողութեամբ աւարտելով ի Բարիզ՝ Պոլիս վերադարձած է, «Արեւիք»ի մէջ հրատարակեց յօդուած մը Լօնտօնի վրայ ուր մի ամսէ աւելի կեցած է: Այդ յօդուածէն մի քանի մասեր «Մասիս»ի ընթերցողաց ներկայացնել օգտակար համարեցինք:

Լօնտօն ընդարձակադոյն է աշխարհի քաղաքաց մէջ: Լօնտօն իւր արուարձաններով 4 1/2 միլիոնէ աւելի բնակիչներ ունի եւ 700 քառակուսի մղոն ընդարձակութիւն. հաշիւ կ'ընեն որ եթէ Լօնտօնի ժողովուրդն արդի համեմատութեամբ բազմանայ, քըսաներորդ դարուն վերջն անկլիական տաւանն 23 միլիոն բնակիչ պիտի ունենայ: Լօնտօն՝ Խորհրդարանէն, Ուէսթ մինիսթրի և Ս. Պողոսի եկեղեցիէն զատ նշանաւոր չէնքեր չ'ունի. բայց Լորտերու բնակութիւնը, Գլխաւորներն, պալատներն, եկեղեցիներն մեծաւայելուչ երեւոյթ մը կուտան իրեն: Գուլմ մասնաւոր տանց, որք ընդհանրապէս ցած են և աղիւսով չ'ինուած, տխուր և սառնական միօրինակութիւն մ'ունին: Այդ չէնքեր կառուցուած են հազիւ դար մը դիմադրելու համար, զի Լօնտօնի տանց շատերու տէրերն բացարձակ տէր չ'են իրենց գնած հողին որ ընդհանրապէս 99 տարի յետոյ կը դառնայ բուն իսկ հողատիրոջն, զոր կը կոչեն ֆէֆօւլը: Թող այս չզարմացնէ զմեզ. Անկլիոյ մէջ առատականութիւնն դեռ ուրիշ շատ ընկերական հաստատութեանց մէջ գերիշխան է:

Սակայն Լօնտօնի դեղեցիկ քառերն կ'ամբեն մեծապէս այն անախորժ ապաւորութիւն, զոր տանց տխուր երեւոյթն կը ներգործէ վրադ: Այդ ընդարձակ պարտէզներ ճշմարիտ բարիք մ'են Լօնտօնի համար. հանրային զբոսավայրեր են դոքա, ուր ժողովուրդն կ'երթայ շնչել մաքուր օդ և վաշելել դժուրութիւն:

Գոցա զլիաւորն է Հայր Բառ, զոր կը գեղադարձեն մարգագետինք և ծառուղիք: Երբ օդն դեղեցիկ է, անդ կը տեսնեն անկլիական աղնուապետութիւնն: Ճիսկաւեր գաղափար մը կուտան քեզ այդ երկրի մեծ հարստութեանց վրայ: Իրուն հաւաններ կուգան իրենց սովորական ոլտոյտն ընել Բոթլ Բոթ ծառուղոյն վրայ, իրենց ետեւ ունենալով՝ աւանդական հաւաւորութեամբ՝ ծիաւոր սովորիկներ: Այդ

հրապուրիչ ամաղոններու մէջ յաճախ կը գտնես աննման գոհարներ անկիրական գեղեցկութեան . ընդհանրապէս կ'ընկերանայ նոցա երիտասարդ մը , իրենց եղբայրն կամ նշանածն և կամ սլարդ բարեկամ մը , զի անկիրացի աղջկունք շատ ազատ կը մեծնան , ինչ որ չ'արգիլէր որ տալ լինին սլարկեշտ ամուսիններ և արժանաւոր մայրեր , մինչդեռ Փրանսացի աղջկունք , որք ամուսնանալէ յառաջ իրենց մօր թեւին տակ կ'սպրին գըրէթէ գերի , շատ անգամ ամենազատկեանք մը կը վարեն ամուսնանալէ յետոյ . . . :

Սակայն կիւրակէ օրերն ո՛չ կառք կը տեսնես ի Հայտ Բառք , ո՛չ ձի , ո՛չ ձիաւոր : Հարկ է սուրբ պահել Աստուծոյ օրն , ուստի ազնուապետականն չենք ուղղորտի : Հայտ Բառք կիրակի օրերն կեդրոն կը դառնայ ժողովրդային հրապարակախօսութեանց և քարոզներու : Աստ կին մ'է որ կը քարոզէ թէ հարկ է զոջալ մեր մեղաց վրայ , Աստուծոյ գիրկն դառնալ , ապաշխարել ու աղօթել . անդ երիտասարդ մ'է որ Սուրբ Գրքէն հակասութիւններ ի վեր կը հանէ և ջատագով կը հանդիսանայ անաստուածութեան . քիչ մ'աղին Գինեհատական ընկերութեան (Թէֆֆէն Սոսայէ) մի անդամն է որ կենդանի գոյներով կը նկարագրէ գինեմոլութեան տխուր հետեւանքներն , խորհուրդ կուտայ չործածել ոգելից Ըմպլիւներ և կը ջանայ գտնել նոր ընկերներ , որք ուխտեն ժուժկալութիւն . աւելի հեռուն կը տեսնես պահպանողական մը որ կը խօսի քաղաքականութեան վրայ և կը քննադատէ ալլատականաց աշխարհավարութիւնն : Եւ այս ամեն ատենաբաններու շուրջ բազմութիւ մարդիկ հաւաքուած են և կ'ունկնդրեն . անոնցմէ մին երբեմն առարկութիւն մը կ'ընէ ատենաբանին , որ յաճախ կը պատասխանէ և ահա կը սկսի կրակոտ վիճաբանութիւն մը ատենաբանին և ունկնդրին միջեւ : Այս ամենն տեղի կ'ունենայ առանց կռուոյ , առանց աղմուկի , այդ բազմութեան մէջ չեն հանդիպիր ոչ մի ոստիկանի . և դու օտարականդ , այդ խոհուն ժողովրդեան հանդարտ վարմունքին հանդիսատես , կը համակուիս սրատխառնքով :

Իսկ գիշերն Հայտ Բառք կը դառնայ ընդարձակ դրօսավայր մը , ուր կը խուժեն անբարոյական կանանց յետին դասն և հասա-

րակ ժողովուրդն . անդ , ծառերուն ներքեւ , նստարաններուն վրայ , մարդագետնին վրայ , կ'ընդունարես տեղ տեղ ստուերներ , որք , մութին մէջ , կը սիրաբանեն . . . և ոստիկանութիւնն չ'արգիլէր այդ գայթակղական տեսարան ու չը մաքրէր այդ ասականութեան կեդրոն : Արդարեւ ինչո՞ւ խառնուիլ այլոց գործին . միթէ այդ բռնաբարել չէ՞ անհատական անկախութիւնն . . . : Ալլատութեան սկզբունքն մինչեւ այս աստիճան յարգուած է ահա այս տարօրինակ ժողովրդեան մէջ :

Լօնտօն Բարիզի նման ծառուղիներ չունի : Վան սակայն բնդարձակ փողոցներ : Գլխաւոր փողոցներն փայտով յատակուած են , ինչ որ մաքուր կը պահէ զայն և մեծապէս կը մեղմացնէ կառքերու աղմուկն : Լօնտօն ունի հարուստ վաճառատուններ և ճոխ խանութներ . սակայն այս գերադրուպէս վաճառական ժողովուրդն չափ դրած է նոյն իսկ չաչասիրութեան . երեկոյեան ժամ 7 ին (ըստ եւրոպական) գրէթէ բոլոր խանութներն կը փակուին : Երբ գիշերն կը հասնի , Լօնտօնի փողոցներու շարժումն գրէթէ կը դադրի և քաղաքն մեռելութեան վիճակ կը ստանայ բաղդատմամբ ցերէկուան : Միայն մի քանի հարուստ թաղերու մէջ , ի Ռիճընդ և ի Բիքստեյլի մանաւանդ , ուր կ'իջնեն յաճախ օտարականք , շարժումն նոյն կը մնայ : Անդ են ընդհանրապէս թաւերք և զբօսավայրք և մինչեւ կէս գիշեր այդ թաղերու մէջ կը գտնես կենդանութիւն : Հանրային կանայք կը ընուն փողոցներն : Հազաւագիւտ չեն նոցա մէջ տասնէրեք տասնչորս տարեկան աղջիկներ , գրէթէ մանուկներ : Նոքա ժամերով կը շրջին փողոցէ փողոց , ներկայելով անցորդին իրենց վտանգաւոր հրապոյրներ : Յաճախ այդ խեղճ արարածներն կը տեսնես՝ մազերն խառն ի խուռն , անխնամ կերպով չլարեալ և գինով : Արդարեւ այդ լքեալ պատանու հիներու վիճակն ամօթ մ'է անկիրական ժողովրդեան համար : Յանուն անհատական ազատութեան Անկիոյ մէջ բարուց ոստիկանութիւն չէ հաստատուած և այս կերպով աշխարհի ամենէն քրիստոնեայ և ամենէն բարոյական ժողովուրդն կ'ստիպուի անտարբեր հանդիսատես լինիլ այդքան կանխահաս անբարոյականութեանց . . . :

Բայց եթէ բարուց ոստիկանութիւն չկայ

ի Լօնտոն, այդ ըսել չէ թէ ոստիկանութիւնն անհոգ և թոյլ է։ Ընդհակառակն, ոստիկանութիւնն իրասկէս հիանալի կազմակերպութիւն մ'ունի անդ։ Ընդհանրապէս լաւ կրթութեամբ և լաւ վճարութեամբ, քօլէճիկներ մեծարեալ հեղինակութիւն մ'է։ Փողոցին հսկողութիւնն կը կատարէ իրը նուագախումբի պէտք մը։ ձեռքի պարզ նշան մը կը բաւէ իսկոյն կասեցնել բոլոր կառքերն։ Անձնիւր ոստիկան իւր պաշտպանութեան ներքեւ ունի մի քանի փողոցներ, հսկողութիւնն է աշտուղը և տեւական։ Ամեն գիշեր կը տեսնես քօլէճիկներ որ իւր կլոր կանթեղով կը քննէ դռներն ստուգելու համար թէ ամենն ալ լաւ գոցուած են։ Պատմեցին ինձ թէ երբ կ'անցնի գոհարավաճառի մը կամ գրամատխանի մը խանութին առջեւ, բաց թողութեամբ փողոցի պատուհանէ մը ներս կը նայի, ինչ որ կը պակսեցնէ գողութեանց թիւն։ Սակայն հակառակ բոլոր այս նախազգոյշ միջոցներու, գողութիւնք և ոճիրք յոյժ բազմութիւն են, ինչ որ վարմանալի չէ երբ մարդ ի նկատ առնու Լօնտոնի հասարակ ժողովրդեան անհնարին թշուառութիւնն և ապականութիւնն։ Միայն թէ յանցաւորք չատ քիչ անգամ կը մնան անպատիժ և ժիր քօլէճիկներ ընդհանրապէս կը յաջողի՝ ձերբակալել զայնս և յանձնել արդարութեան։

Արդարութեան կազմակերպութիւնն ի Լօնտոն յոյժ հետաքրքրական է։ Կայ անդ 20ի մօտ Ոստիկանութեան դասարաններ (Բոլայս Գօբլ), պատժական դատերու համար և 10 Երանգային դասարաններ (Բլէքբլ Գօբլ) քաղաքային դատերու համար։ Անդ սոցմէ գատ կան բազմաթիւ բարձրագոյն տառններ, քաղաքային և պատժական։ Անկլիացիք չ'են ճանաչեր վարչական արդարութիւնն և չ'ունին վարչական դատարաններ։ քաղաքային դատարանք կ'ըզողին վարչական դատերով և կառավարութեան մի պաշտօնէին գէ՛մ գատ վարելու համար հարկ չը կայ բնաւ պետական կանխատուարտօնութեան։ ուէ պաշտօնեայ իրը սլորդ քաղաքացի պատասխանատու է իւր վարչական գործոց իսկ համար քաղաքային դատարանաց առջեւ։ Գերագոյն Գատարանն է Լորտերու խորհրդարանն, որոյ նախագահն, Լորդ Լանսլէյը, անդամ նախարարաց

խորհրդին, արդարութեան գերագոյն պաշտօնեայն է։

Երկրորդական յանցանքներու համար կայ ի Լօնտոն ուրիշ դատարար մ'որ իւր նմանն չ'ունի ուրիշ անկլիական քաղաքներու մէջ։ Այդ դատարարն է Լօրտ Բալաքապետն, այսինքն Միջնաքաղաքի քաղաքային կառավարիչն։ ԺԳ. դարէն ի վեր, Միջնաքաղաքի վարչական իշխանութիւնն մենաշնորհեալ է և քաղաքական հղօր հեղինակութիւն մ'է Լօնտոնի մէջ։ Թագուհին իսկ ուէ ուղղակի հեղինակութիւն չ'ունի նորա վրայ և եթէ Միջնաքաղաքն այցելել ուզէ, Անկլիոյ վեհապետն պարտաւոր է հրաման առնուլ Միջնաքաղաքի վեհապետէն։ Այս վերջինն իւր ընտրութեամբ օրէնս թող ունի նախարարաց խորհրդին մէջ և պաշտօնական արարողութեանց մէջ արքայական ընտանեաց անդամներէն աւելի պատուաւոր տեղ մը կը գրաւէ, ի բաց առեալ Թագուհին։ Այդ բարձր պաշտօնի թեկնածու լինելու համար հարկ է անդամ լինիլ Միջնաքաղաքի արհեստաւորաց, վաճառականաց կամ դրամատեսարց միաբանութիւններէ միոյն և մին լինիլ քաղաքային վարչութեան 26 գլխաւոր խորհրդականներէն, որք կը կոչուին Կլերկս։ Քաղաքապետի ընտրութիւնն կը կատարուի ամեն տարի, սեպտեմբեր ամսոյ մէջ, ի Կիլտհալ, որ կրնայ նկատուիլ Լօնտոնի քաղաքապետական սրահն։ անդ կը հաւաքուին միաբանութիւնք և կը կատարեն ընտրութիւնն։ Այդ շէնքին մէջ կը տրուի նաև հոկտեմբեր 9ին, այն օր ուր Քաղաքապետի պաշտօնը կ'սկսի, փառաւոր սեղան մը, որոյ համար Միջնաքաղաքն 3000 անկլիական ոսկեայ ծախք կ'ընէ։ Սովորոյթն կը պահանջէ որ նախարարութեան գլուխն խօսք առնու այդ օրն ճաշի տեսն և խօսի իւր աշխարհավարութեան վրայ։ Պ. Կլատագոն խոյս տուաւ այս տարի այդ աւանդական պարտականութենէն։

Միջնաքաղաքին տրուած այս մեծ կարեւորութիւնն, որ անխրաւութիւն մ'է քաղքին միւս մասանց բնակիչներուն համար, իւր մասնական արդարացումն ունի։ Միջնաքաղաքն կեդրոնն է Լօնտոնի առեւտրական գործողութեանց։ Անդ են բոլոր գըլխաւոր գրամատուներ, վաճառատուներ, ա-

սլահովադրական և այլ ընկերութեանց կեդրոնատեղիք : Անդ եւ նաև Լօնտօնի գըլխաւոր լրագրաց տարաւոր և գրասենեակք :

Ի շնորհս մամուլայ բացարձակ ազատութեան , լրագրութիւնն յԱնկլիա ահագին զօրութիւն մ'է : Միայն Լօնտօնի մէջ 380 պարբերական հրատարակութիւններ կան , յորս 24 օրաթերթեր : Այս օրաթերթերու գըլխաւորներն հսկայական ձեռնարկութիւններ են : Գոցա և թերեւս բոլոր աշխարհի թերթերու թագուհին է Թայմսը : Իւր տասնեակեց էջեր գուցէ առանձին աւելի տառ կը պարունակեն , քան բոլոր հայ պարբերական հրատարակութիւններէն մի մի օրինակ , հաւաքաբար . և այդ թերթի գինն է վաթսուէն փարա միայն : Թայմսը չը վերաբերիր որ և է կուսակցութեան . ընդհանրապէս նկատուած է իբր Անկլիոյ պաշտօնական թերթն : Սակայն Լօնտօնի մէջ ամենէն չափ կարգացուած թերթերն են Տէյլի Թէլէկրաֆ , Սթէյնտըրտ , Տէյլի Նիուզ , առաջիններն պահպանողական , վերջինն ազատական : Այս թերթերն , որք մեծ ծախքեր ունին , մեծ ալ հասոյթ ունին ոչ միայն թերթին վաճառումէն , այլ մանաւանդ ազդերէն , որք մեծ գումարներ կը բերեն : Հաշիւ եղած է թէ Տէյլի Թէլէկրաֆ օրն 1100 ոսկւոյ հասոյթ մ'ունի միայն ազդերէ : ՅԱնկլիա ամեն ոք ազդերու կը գլխէ ինքզինքն ճանչցնելու համար : Քիչ չափ հարուստ ընտանեաց մէջ տեղի ունեցած ծնունդք , ամուսնութիւնք , տեղափոխութիւնք , մահք ազդերով կը ծանուցուին : Ամուսնանալ ուզողներ յաճախ ազդերու միջոցաւ այր կամ կին կը փնտռեն : Կարելի է , զոր օրինակ , կարողալ լրագրաց մէջ . « Յիսուն տարեկան այրի կին մը , մեծ հարստութեան տէր , կը փափաքի ամուսնանալ գեղեցիկ և ուսեալ երիտասարդի մը հետ » : Ազդերու միջոցաւ մինչեւ իսկ թղթականցութիւնք կը կատարուին , յաճախ ամենափափուկ խնդիրներ նիւթ ունենալով : Կ'ընդ օրինակեմ . « Առ Րիչարտ Գ. Ր. Սիւրելիս , անհամբեր կ'սպասեմ գարտեանդ . դեռ չկրցա՞ր պատրուակ մը գտնել . եթէ դեռ պիտի յապաղիս , 20 ոսկի յղէ քեզ ծանօթ հասցէին , միջոցաւ թղթատարութեան . մեծ պէտք ունիմ » :

Այլ երկրներու մէջ կիւրակէն զբոսանքի օր մը նկատուած է . յԱնկլիա աղօթքի եւ

կրօնական կրթութեան օր մ'է այն : Ամբողջ Լօնտօն կերպարանափոխ կը լինի այդ օրն : Ամայի փողոցներ , դոց խանութներ տխուր երեւոյթ մը կուտան քաղքին , որ դերադրապէս անախորժ տաւառութիւն կը ներգործէ օտարականին վրայ : Առաւօտեան ժամ 11 ի մօտերն զանգակը կը սկսին հնչել : Այն ատեն փողոցներու երեւոյթն պահ մը կը փոխուի : Կը տեսնես ամեն կողմ այր , կին , ծերունի , երիտասարդ , մանուկ , որք կ'երթան եկեղեցի , լուրջ գլխօք , աղօթադիրք ի ձեռին : Անկլիա Եւրոպայի ամենէն բարեպաշտ երկիրն է : Ըստ վիճակագրական հաշուոյ մը , 100,000 մարդու համար Իտալիոյ մէջ կայ 81 եկեղեցի , Գերմանիոյ միջ 84 , Ֆրանսայի մէջ 103 , Սպանիոյ մէջ 112 , իսկ Անկլիոյ մէջ 144 : Լօնտօն միայն ունի 1500 ի մօտ եկեղեցի , մատուռ կամ աղօթատեղի , և չեմ կարծեր որդոցա մէջ գտնուին շատեր , ուր ժողովուրդն խանուած չը լինի կիւրակէ օրերն . ես ո՞ր եկեղեցին գնացի , միշտ հոծ բաղմութիւն գտայ : Անկլիոյ մէջ ճանչցուած ազանդներն 183 ի կը հասնին այսօր . այդ ամենուն մէջ երկու զլխաւոր պետական կրօններ կան . Եպիսկոպոսական եկեղեցին յԱնկլիա և յՈւէյլ . Երկրական եկեղեցին ի Սկոթիա . Իրլանտայի մէջ պետական եկեղեցի չը կայ 1870է ի վեր : Եպիսկոպոսական եկեղեցին Գէնդըրպլըրի և Եօքսի արքեպիսկոպոսներու և երեսուն եպիսկոպոսի իրաւասութեան ներքեւ է : Ազանդներն ունին իրենց մասնաւոր վարդապետութիւններ . Տէլէգրաֆի Քրիստոնէայ , չ'են ընդունիր որ հանդերձեալ կենաց մէջ Աստուած յաւիտեան լքէ մեղապարտներն . Սոփիստիկայ , չ'են ընդունիր երրորդութիւնն և Քրիստոսի աստուածութիւնն . Գալլիկանայ , չ'են հաւատար թէ հաղորդութիւնն մարմին և արիւն է Քրիստոսի . Աղաբաժնի Քրիստոնէայ , չ'են հաւատար հոգւոյն աննիւթակա նութեան . Ասոբաթաշի Քրիստոնէայ , նստած կը հաղորդուին , որպէս առաքեալք հաղորդուեցան , և լն , և լն :

Եւ դեռ Անկլիացիք կը գանդատին , և իրաւամբ , թէ 1,000,000 չափ ժողովուրդ Լօնտօնի մէջ զուրկ է կրօնական խնամքներէ . . . : Արդարեւ , երբ մտնես եկեղեցի մը , մաքուր հագուած այրեր և կիներ միայն կը գտնես . ժողովրդեան ստորին դասն

կիրարկէ օրերն փոխանակ եկեղեցի երթալու գինետուն կ'երթայ : Գինետուններն , զորս կը կոչեն հաւաքային տան (բըսլլիք հաուդ) դոց են կիրարկէ օրերն եկեղեցական արաբողովութեանց միջոցին եւեթ . այսպէս թէ՛ առաւօտեան և թէ՛ երեկոյեան մի քանի ժամեր բաց կը մնան : Հետաքրքրական է արդարեւ այցելել զայնս կիրարկէ երեկոյ մը : Կը տեսնես թիթեղեայ տրապիզին առջեւ դիզուած չքաւորի երեւոյթով ծերունիներ , երիտասարդներ , պատանեակներ իսկ . ես տեսայ ցնցոտի հագած կիներ , որք դիեցիկ մանկիկն իրենց գիրկն , եկած էին ճէն խմել . . . :

Եթէ այդ կորուսեալ ոչխարաց փրկութեան համար անկլիքան եկեղեցւոյ հովիւք գրեթէ անտարբեր կը մնան , կան որք կ'աշխատին կրօնական գեղացում ներշնչել նոցա : Այդ նպատակով է որ մի քանի տարի առաջ կազմուեցաւ յԱնկլիա Փրէսբիտէրիան (Սալվէյըն արմի) : Այս աղանդ ունի գրեթէ անկլիքան եկեղեցւոյ վարդապետութիւնն , այլ բոլորովին տարբեր կազմակերպութիւն : Կրօնական բանակ մ'է այն իւր զորապետով , զնդապետներով , դանազան սատիճաններ ունեցող պաշտօնակալներով և զինուորներով : Կանայք ալ կրնան զրուիլ զինուէր և կան զնդապետուհիներ իսկ : Բանակին զօրապետն է Պ. Պուդ , որ մեծ հարստութիւն մը յատկացուցած է գործին յաջողութեան : Տիկին Պուդ բանակի զօրապետուհին կը յորջորջուի և օրիորդ Պուդ մարալախտուհին : Այս վերջինն պերճաւոր և զեղեցիկ երիտասարդուհի մ'է և իւր հրաշունչ քարոզներ քիչ գեր չ'են վարած Փրկութեան բանակի յաղթանակաց մէջ : Մալվէյընիք եկեղեցւոյ տեղ ունին չորանոց (այսպէս կը կոչեն իրենց ժողովատեղին) , և երգեհոնի տեղ ունին զինուորական շէփորայք և թմբուկք : Արարողութեանց , առտեն , դպիրք ունին համազգեստ ըստ իրենց սատիճանին : Բանակն ունի իւր սպայակոյտ և իւր պաշտօնական թերթ , որ կը հրատարակուի թէ՛ յԱնգլիա և թէ՛ յԱմերիկա շարքովն երկու անգամ : Այդ թերթի աւուրն է Ուոք Գրայ (Ձայն Պատերազմի) և ամեն երեկոյ չորանոցաց մէջ կը վաճառուի ժամերդութեան միջոցին :

Փառաքելով ներկայ գտնուիլ այդ ար-

տակեղորոն աղանդաւորաց մի դումարման , կիրարկէ երեկոյ մը գնացի Օքսֆորտի չորանոցն՝ որ գլխաւորագոյնն է ի Լօնտօն : Մեծ եղաւ զարմանքս երբ հասայ դրան առջեւ . փողոցն լի էր բազմութեամբ և ոստիկաններ կը հրաւիրէին ժողովուրդն որ ցրուի : Հարցայ և տեղեկացայ թէ չորանոցն արդէն լցուած էր և թէ այլ ևս տեղ մնացած չը լինելով ստիպուած էին փակել դռներն եւ չ'ընդունիլ նոր ունկնդիրներ : Հետեւեալ երեկոյ որոշեալ ժամէն բաւական յառաջ գնացի տեղ մը գրաւել անդ , եւ ներկայ գտնուեցայ տարօրինակ ժամերդութեան մը : Ընդարձակ սրահ մ'էր այդ ժողովատեղին ուր կային ամերիկացիներ ձեռով նըստարաններ : Ժամ երեկոյեան 7ին (ըստ եւրոպական) դպիրք , իրենց զինուորական նշանագործիներն հնչեցնելով , թողուցին չորանոցն եւ գնացին պառկած մ'ընել փողոցներն . կէս ժամ յետոյ նոքա դարձան նոր խմբով մը , զոր փողոցի հետաքրքիրք կազմած էին , եւ շարուեցան բեմին ձախ կողմն : Այդ կողմն կը գրաւէին դպրուհիք : Կը նախագահէին գնդապետ մը եւ գնդապետուհի մը , որոց առաջնորդութեամբ , դպիրք եւ դպրուհիք , փոխնիփոխ , աղօթքներ երգեցին : Ապա գնդապետն քարոզեց , եւ բեմն ի ծուներ կրկնելով , երբեմն յոտնկայս ձեռքերն յերկինս բարձրացնելով , մերթ հանդիսաւոր ոճով , այլ յաճախ զուարճաբանելով . իւր խօսքեր քանիցս ծափահարուեցան : Քիչ յետոյ ունկնդիրք սկսան երգել դպրաց հետ . ամենուն ձեռքն կը գըտնուէր պաշտօնական թերթն ուր հրատարակուած էին նաեւ նոյն օրուան երգուելիք տաղերն : Հուսկ ուրեմն ամենն ալ խանդավառեցան . մեծ էր աւիւրն եւ աղմուկն . դպիր եւ ունկնդիր կը փառաբանէին զԱստուած , ցնծութեան ցոյցներով . կային նոցա մէջ որք իրենց թաշկինակներն յօդս կը ծածանէին իրր նշան յաղթութեան Փրկութեան բանակին : Այս յաւէտ կամ նուազ ընդունելի միջոցներով ահա Անկլիացիք կը ջանան վարժեցնել հասարակ ժողովուրդն որ փոխանակ գինետուն երթալու՝ ժողովարան երթայ : Կ'երեւայ թէ այդ կերպով յաջողած են իրական պատենչ մը դնել զինեւ մոլութեան զարդացման դէմ՝ ժողովրդեան ստորին դասուն մէջ . Փրկութեան բանակն ունի արդէն 1,000,000ի մօտ զինուորներ և վերջերս պաշտօնապէս ճանչցուեցաւ յԱնկլիա իբր յատուկ աղանդ :

ՀՐԱՆՏ ԱՍՏՏՈՒՐ

ԿՐԹԱԿԱՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷՉՆԵՐԸ

Մ Ի Ա Յ Ե Ա Լ Ն Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր Ո Ւ Մ

Հաղիւ տասներկու կամ տասներկինգ տարի կայ որ Մանկական պարտեզների ըսկիւրը գրուեցաւ Ամերիկայի Միացեալ Նահանգներում: Այս օգտակար գործի ըզկըզբնապատճառն եղան մի քանի խեղացի ու վեհանձն կանայք, որոնք Յրէքէլի կրթական եղանակի գործադրութեան փորձերը տեսել էին Եւրոպայում, եւ նորա բանաստեղծական գեղեցկութեամբ հրապուրուած՝ մոգերը գրին նոյն կրթութեան սկզբունքներն ու միջոցները ծանօթացնել իրանց հայրենակիցներին այն եռանդով ու տոկոնութեամբ որ դիտէ ներշնչել մանուկների սէրը:

Առաջին փորձերն անողներն եղան Բոստոնում օրիորդ Պիքոդի եւ իւր քոյրը տիկին Հորաս Ման. այս տիկինները իրանց գըրուածներով եւ կենդանի խօսքով զօրաւոր կերպով նպատեցին Յրէքէլի գաղափարները տարածելուն:

Տիկին Հորաս Մանը մասնաւորապէս կատարեալ անձնուիրութեան օրինակը տուեց, կամենալով գործնականը տեսականի հետ միացնել, եւ նա անձամբ մի քանի տարի շարունակ կառավարեց մի մանկական պարտեզ, ուր գործ էր դնում Յրէքէլի եղանակը իւր բոլոր խառութեամբ: Եւ յիշաւի այդ ամենաընտիր կրթութիւն էր եւ ամենահաստատուն միջոց մի նպաստաւոր կարծիք ըստեղծելու հասարակութեան մէջ յօդուտ նորածին գործի:

Մանկական պարտեզների յաջողութեանը մի նոր գրաւական եղաւ օրիորդ Բէլլէի Նիւ-Նորկ գաղը: Այս անձը, որ Յրէքէլի այրիի մօտ աշակերտել էր, յիշեալ քաղաքում հիմնեց մի ուսուցչական դպրոց եւ մի մանկական պարտեզ գաւառիարակների կըրթութեան համար, եւ նա պատրաստեց մօտ 300. ուսուցչուհի, որոնք այսօր ցրուած են Ամերիկայի բոլոր նահանգներում: Օրիորդ Բէլլէն, այսօր տիկին Արաւս, մեծ օգնու-

թիւն դատու իւր ամուսնու կողմից, եւ նոցա հաստատութիւնը ամենայառաջադէմներից մէկն է իւր տեսակի մէջ:

Այնուհետեւ նորանոր մանկական պարտեզներ հիմնուեցան Ֆիլադէլֆիայում, Վաշինգտոնում եւ ուրիշ քաղաքներում, իւրաքանչիւրը իւր ուսուցչանոցով, ուր Յրէքէլի կրթութեան եղանակը մէկ կողմից աւանդւում եւ միւս կողմից գործ էր դրվում, եւ նորա բոլորը ամերիկական հասարակութիւնների կողմից խրախոյս եւ պաշտպանութիւն գտան: Եթէ մի երկիւղալի բան կայ, այն է որ այս հաստատութիւնների մէջ ընդունուած երեխաների թիւում հարուստ ծնողաց քիչ շատ յիշացած դաւաններ լինելով, դուրսէ ստիպուած գոնուեն այս վերջիններին մի քանի զիջողութիւններ անել, որոնք կարող են վնասել վարչութեան միութեանը եւ վստ օրինակ դառնալ ուսուցչուհի — աշակերտուհիների համար:

Այս առաջին շրջանից եւ յատկապէս 1876 ի հարիւրամեակից յետոյ, մի ընդհանուր շարժում երեւեցաւ յօդուտ մանկական պարտեզների, որ տարեց տարի զօրացաւ, եւ այս հաստատութիւնների թիւը աճելով աճեցաւ, այնպէս որ 1880 ին արդէն Միացեալ-Նահանգներն ունէին 232 մանկական պարտեզներ, 8,871 երեխաներով եւ 524 ուսուցչուհիներով:

Որքան մանկական պարտեզների թիւը աւելանում էր, այնքան աւելի լաւ պատրաստուած վերատեսչուհիների կարիքը ըզգալի էր լինում, եւ այս պակասը լրացնելու համար եթէ ոչ բուն ուսուցչական դըպրոցներ, գոնեա մասնադիտական դասընթացներ բացուեցան ամեն տեղ: Օրիորդ Բոսս, Բոստոնի մի մանկական պարտեզի վերատեսչուհին, տիկին Պուդնամ Չիկագօում, օրիորդ Բլօլ Սէն-Լուիում, այս նպատակով մասնաւոր դասընթացներ հիմնեցին, եւ այսօր Միացեալ Նահանգների բոլոր քաղաքներում գտնվում են կանայք, որոնք մի միայն մանուկների օգուտները աչքի առաջ ունենալով անձնուիրաբար նոյն դերը կատարում են:

Սմէնից աւելի հետաքրքրութեան եւ ուշադրութեան արժանի են Բոստոնի եւ Սէն-Լուիի մանկական պարտեզները թէ՛ իրանց կարմակերպութեամբ եւ թէ՛ վարչական մի-

օրինակութեամբ : Նոցա թիւը և հիմնարկութեան պատմութիւնը մի վարմանալի օրինակ են ներկայացնում այն անխոնջ գործունէութեան, որ Միացեալ Նահանգներէ բնակիչները ցոյց են տալիս ընդհանրապէս ամէն պարագաներում : Այսպէս, Բոստոնը ունի երեսուն մանկական պարտէզ, որ հիմնել է և կառավարում է հռչակաւոր Ագասիս պրոֆեսորի դուստրը, տիկին Պօլին Շօլ. բոլորը միասին պարունակում են 1,800 երեխայ 2ից մինչեւ 3 և 6 տարեկան հասակում : Նոցա վարչութիւնը կանոնաւոր կազմակերպութիւն ունի . 17 առանձին յոգնածները բարկացած կանոնադրութիւնը ցոյց է տալիս այս հաստատութիւնների դիտաւորութիւններն ու նպատակը, և այդ կանոնադրութեան դործադրութիւնը յանձնուած է մի տեսչուհու հսկողութեանը, որի միջնորդութեամբ հիմնադրը ծանօթանում է բոլոր ցանկութիւններին ու պէսքերին :

Այս հաստատութիւնների նիւթական վիճակը շատ դոհացուցիչ է թէ՛ բնակարանների և թէ՛ կահ կարասիների կողմից, որոնք ընդհանրապէս բազկացած են Ֆրէբէլի սխտեմի դործադրութեան համար անհրաժեշտ իրեղէններից, որալիս են տեղափոխուող թիկնաթուներ, քառակուսի սեղաններ, քարէ դրատախտակներ՝ դահլիճների անկիւններում դրուած, Ֆրէբէլեան պարզեւներ, առարկայական դասերի համար հարկաւոր եղած պատկերներն և իրեր, զանազան տեսակ խաղալիքներ, տիկիւններ, ևայլն . նոյնպէս և սեղաններ, ամաններ, բաժակներ և անձեռոցներ երեխաների նախաճաշիկի համար : Տեղ տեղ կայ և մի դաշնակ, որ դործ է դրվում երեխաների երգեցողութեան և ման դալու ժամանակ :

Պարապմունքը սկսում է առաւօտեան ժամը 9ին և կէսօրին վերջանում . ամէն մի վարժութիւն, որոնցից ընթերցանութիւնը բոլորովին արտաքսուած է, հինգից մինչեւ ութը բաղկէ տեւում : Այս վարժութիւնները բաղկանում են թեթեւ դասերից մանուկներին ցոյց տրուած իրերի վրայ, և նոցա նպատակը ոչ այնքան կրթելն է, որքան երեխաներին տպաւորութիւններ տալ և նոցա հետաքրքրութիւնը շարժել : Փոքրիկ և եթէ ներքին է այսպէս ասել, նշան

բաներ են այդ վարժութիւնները, որոնց բոլոր կարեւորութիւնը, նայելով երեխաների մատաղ հասակին, կայանում է իրանց պարզութեան մէջ :

Սակայն այս թեթեւ դասաւանդութեան մէջ ամենայն ինչ մի որոշ դիտաւորութիւն և մի դրական նպատակ ունի, այն է վարժացնել մանկան մէջ նկատողական ոգի, և հետեւապէս վարժեցնել նորան անձամբ խորհելու, համեմատելու և դատելու իւր սահմանափակ շրջանի մէջ : Նրեխան չէ սովորում կարգաւ . բայց նա սովորում է խօսել, և մինչ մէկ կողմից իւր փոքրիկ բառարանը հետզհետէ հարստանում է, միւս կողմից պահանջվում է նորանից որ իւր միտքերը կանոնաւոր կերպով բացատրէ :

Առանձին ուշադրութեան արժանի է այն ազդեցութիւնն, որ ունին նկարչութեան վարժութիւնները քարէտախտակի վրայ : Փոքրիկ շինութիւնները պինդ նիւթերի օգնութեամբ, դոյների յարմարաւոր դասաւորութիւնը թղթի կտորներից դործուած և հիւսուած իրեղէնների մէջ : Մանուկներն շատ շուտով ստանում են ձեռքի մեծ ճարպիկութիւն և ճիշդ հայեացք այս բոլոր մանր աշխատութիւնները կատարելու, որոնք կարգի ու համաչափութեան հետ ստեղծողական կարողութիւն են զարգացնում նոցա մէջ : Բայց այս վարժութիւնները չպէտք է մինչեւ չափազանցութեան հասցնել :

Մանկական պարտէզների ուսուցչուհիները վեհանձն հիմնադրի զաղախարներով ներշնչուելով և նորա օրինակին հետեւելով, ամենամեծ անձնութեամբ կատարում են իրանց պարտականութիւնը՝ շարունակ ուսանելով և իրանց ուսածը խելացի կերպով դործ դնելով : Թէեւ օրը միայն երեք ժամ են պարապում մանուկների հետ, բայց այս համեմատաբար կարճ ժամանակամիջոցում նոցա միաբը այնքան լարուած է և այնքան աշխրջութիւն է պահանջվում նոցանից, որ նոքա չէին կարող երկար ժամանակ դիմանալ, եթէ օրական պարապմունքը աւելի լինէր :

Տիկին Շօլի հոգատարութիւնը տարածվում է մինչեւ իսկ իւր խնամքին յանձնուած մանուկների դերդաստանների վրայ . ուսուցչուհիների վրայ պարտք է դրուած այցելել նոցա և տեղեկութիւններ հաւաքել

նոցա վիճակի ու կարօտութիւններէ վրայ :

Այս բոլոր պարտաւորութիւններէ զուրս ուսուցչուհիները ստիպուած են կանոնաւորապէս ներկայ գտնուիլ զանազան դասախօսութիւններէ, որոնց նպատակն է կըրթութեան խնդիրները քննութեան ենթարկել և լուսաբանել :

Այսպէսով այս տիկիները ամբողջապէս դաստիարակութեան գործին նուիրուած լինելով, հասկանալի է որ նոցա վարձատրութիւնն էլ ըստ այնմ բաւական գոհացուցիչ պիտի լինի . իւրաքանչիւր ուսուցչուհի իւր աշխատութեան փոխարէն ստանում է 600 ից մինչեւ 700 դրամ, այն է 3,000 ից մինչեւ 3,500 Փրանկ : Բացի երեսուն մանկական պարտէզներից, տիկին Շով հիմնել է ինը պատասպարան, որոնք նոյն կարգապահութեամբ և խնամքով են կառավարվում, և պարունակում են 400 երեխաներ :

Այս երկու հիմնարկութիւնների պահանջած տարեկան ծախքը, ինչպէս ասում են, 300,000 Փրանկի է հասնում, և այս գումարը մեծ չէ, եթէ աչքի առաջ ունենանք նոցա կազմակերպութիւնը բոլոր մանրամասնութիւններով :

Բոստոնում ուրիշ տասներկու մանկական պարտէզներ էլ կան հարուստ դասի մանուկների համար, և երկու կամ երեք աղքատների համար, որ այլ և այլ մարդասէր անձինք են հիմնել :

Չնայելով այսքան զոհողութիւններէ, մանկական պարտէզների թիւը չէ համապատասխանում հասարակութեան պահանջներին : Բայց նոցա մատուցած ծառայութիւնները այնքան ակներեւ են և այնպէս լաւ գնահատուած հասարակութիւնից, որ այս հաստատութեան բարեկամները ամենեւին չեն կտակածում թէ վաղ կամ ուշ Բոստոնի Գալլոքական Վարչութիւնը կը ստիպուի մանկական պարտէզների թիւը ժողովրդի պիտոյքների համեմատ աւելացնել, և նոցա և ուրիշ ուսումնարանների մէջ գործ դրուած տարբեր, երբեմն նաեւ հակասական դասաւանդութեան եղանակի մէջ մի ընդհանուր կապ գնել :

Սէն-Նուիում գործը աւելի առաջ գնացած է . այնտեղ մանկական պարտէզները կանոնաւորապէս կստուած են հասարակաց ուսումնարանների հետ, որոնց առաջին աս-

տիճանն են կազմում, և իրրեւ քաղաքային հաստատութիւններ՝ քաղաքին ծախքով են պահվում :

Այս գործի յաջողութեան պատիւը վերաբերում է ամբողջապէս օրիորդ Բլովին, որի գործառնութեան պարագայները որքան հետաքրքրաշարժ նոյնքան խրատական են : 1873 ին Ներպայում ճանապարհորդելուց յետոյ, այս խելացի, ջերմ երեւակայութեան, կրթեալ ու մշակեալ մտքի տէր երիտասարդ անձը, որ մի նշանաւոր և հարուստ գերդաստանի է պատկանում, և որ այն ժամանակ 22 կամ 23 տարեկանից աւելի չէր, իւր ծախքով հիմնեց առաջին մանկական պարտէզը, և անձամբ կառավարեց նորան :

Շուտով այս նորութիւնը գրաւեց հետաքրքիր անձանց ուշադրութիւնը, որոնք սկզբում կասկածական աչքով էին նայում օրիորդ Բլովի ձեռնարկութեան վրայ . բաղմութիւ երիտասարդ աղջիկներ և բարեկամուհիներ խմբուեցան եռանդուն օրիորդի շուրջը և Ֆրէքէլի փիլիսոփայութեան ամենաջերմ հետեւողներն եղան : Իւր հիմնադրի անձնական բարեմասնութիւնների շնորհիւ Սէն-Նուիի առաջին մանկական պարտէզը հէնց սկզբից մի ուսուցչական դպրոցի կարեւորութիւնը ստացաւ, և ուր օրիորդ Բլովը նոր դաղափարի տարածման համար իւր նմանութեամբ պատրաստեց զանազան հարուստ և աղքատ կանայք, որոնց նա հրապուրում էր իւր կենդանի ու համոզիչ լեզուով և իւր պերճ ուսուցմամբ, և որոնք նոր վարդապետութեան ճշմարիտ առաքեալները դարձան :

Այսպէսով օրիորդ Բլովի խնամքով ջանքերը, այն զարմանալի և եթէ կարելի է այսպէս ասել՝ մագնիսական ազդեցութիւնը, որ նա գործում էր իւր հետզհետէ աճող ունկնդիրների վրայ, կարճ միջոցում հասարակաց ուշադրութիւնը իւր վրայ դարձրին, և նա յաջողեցաւ վերջապէս մի ընդհանուր համակրութիւն յարուցանել յօգուտ մանկական պարտէզների : Շարժման գլուխը կանգնեցաւ մի խելացի և հեռատես դաստիարակ, Պ. վերատեսուց Հարրիսը, որ արժանապէս գնահատեց օրիորդ Բլովի բարեմասնութիւնները, և հասկացաւ թէ ի՞նչ օգուտ կարելի է քաղել փոքրիկ մանուկնե-

րի դատախարակութեան մէջ նոցա բացառիկ ընդունակութիւնները :

Այնուհետեւ գործի յաջողութիւնը ապահոված էր :

Նոր ձեռնարկութիւնը, որի կազմակերպութիւնը օրիորդ Բլովին յանձնուեցաւ, արագ արագ զարգացաւ և ցանկալի արդիւնքը տուեց : Այսօր Սէն-Լուի մանկական պարտէզների թիւը 64-ի է հասնում : Նոցա մէջ հաւաքուած են 5,759 երեխաներ 300 ուսուցչուհիներով, որոնցից 129 հոգի ինքնայոժար կերպով նուիրում են իրանց ժամերը մանուկների կրթութեանը, առանց վարձատրութիւն ստանալու : Երբէք օրիորդ Բլովը չէր կարող կարծել, որ իւր սիրած ու գըգնուած գաղափարը այդպէս արագ և արդիւնաւէտ կերպով պիտի իրականանայ :

Իւր գլխաւոր նպատակին հասնելուց յետոյ, այս անխնայ անձը նորանոր պարտաւորութիւններ յանձն առաւ, և այն այնպիսի եռանդով որ տասնապատկեց իւր ոյժերն ու գործունէութիւնը : Իւր վրայ առնելով ուսումնարանների մանկավարժական և գործնական կազմակերպութիւնը, միանգամայն ընդհանուր հսկողութիւնը և ուսուցչուհիների պատրաստութիւնը, նա ամէն բանի հասաւ և իւր լաւ վարչութեամբ գործի ապագան ապահովեց : Այս գործը այսօր ամենամեծ յաւաքողութեան հասած է :

Սէն-Լուի մանկական պարտէզները, որոնք ընդհանրապէս ուսումնարանների շինութիւնների մէջ են տեղաւորուում, ամենալաւ նիւթական պայմանների մէջ են գըտնվում : Ընդարձակ դահլիճներ են յատկացած նոցա համար, որոնք լաւ լուսաւորուած են եւ լաւ օդ ունին : Այդ դահլիճները միջին թուով 90-ից մինչեւ 110 երեխայ են ընդունում, որովհետեւ հարկ է եղել զիջողութիւններ անել եւ փոքր ինչ շէնքիւ Ֆրէքէլի սխաւմի սկզբունքներից, որ պահանջում է քիչ մանուկներ նստեցնել մի սենեկում : Սակայն իբրեւ կանոն ընդունուած է որ իւրաքանչիւր ուսուցչուհի իւր օգնականով 25 կամ շատ շատ 30 աշակերտից աւելի չունենայ իւր տեսչութեան ներքոյ :

Նրեխաները ընդունվում են 4 տարեկան հասակից և մնում են մինչեւ 7 տարեկան հասակները :

Կա՛հ կարասիքը բազկացած է նոյն իրեղէններից ինչպէս և Բաստոնում, և վարժութիւնները, գոնեա ըստ երեւութին, շատ չեն տարբերվում այն վարժութիւններից որ գործ են գրվում յիշեալ քաղաքում : Բայց օրիորդ Բլովը, որ Ֆրէքէլի կրթութեան եղանակը իրան յատուկ կերպով բացատրեց, այնպիսի կենդանութիւն, հետաքրքրութիւն ու շարժում մոցրեց նոյն եղանակի մէջ, որ ուրիշ ոչ մի տեղ չէ կարելի տեսնել և որոնք իւր մանկական պարտէզներին ինքնուրոյն և յատուկ կերպարանք ենք տալիս :

Ջանադան թեթեւ ու զուարճալի պարագմունքներ են տալիս երեխաներին, որոնք նպաստում են նոցա զգայարանները զարգացնելու : Նոքա տեսակ տեսակ բաներ են շինում թղթից՝ ծալելով, գործելով կամ հիւսելով, նոյնպէս և կաղապարելով կամ պարզապէս թղթի վրայ նկարելով : Այս պարագմունքները աստիճանաբար են գընում՝ հեշտից դժուար և պարզից աւելի բարդ զբաղմունքների անցնելով, որով և կրթական ընտիր միջոցներ են :

Հետաքրքիր է տեսնել օրիորդ Բլովի սանիկներն իրանց պարագմունքի ժամանակ : Տեղաւորուելով վեց սեղանների շուրջը իրանց հասակի, ոյժի, զարգացման և պարագմունքների համեմատ՝ նոքա այնպիսի սիրով, ուշադրութեամբ և լաւ բան դուքս բերելու ցանկութեամբ են աշխատում, որ պարզ երեւում է թէ ինչ մեծ զուարճութիւն են գտնում այս վարժութիւնների մէջ : Բայց մի եւ նոյն ժամանակ նոքա սովորում են կարգ ու կանոն պահել, իրանց պրածի վրայ խորհել և իրանց միտքը մի բանի վրայ կեդրոնացնել, և այս դեղեցիկ սովորութիւնները անտարակոյս մեծ ազդեցութիւն կունենան նոցա յետագայ զբաղմունքների, հետեւապէս նաեւ նոցա ասպագայի վրայ :

Պարագմունքների արդիւնքը ամէն աղընկաղութիւնից վեր է, և այս հասկանալի է, բանի որ, ինչպէս ասացինք, իբրեւ ըսկզբունք ընդունուած է երեխաներին միշտ ծանօթից դէպի անծանօթ և հեշտից դէպի դժուարը առաջնորդել : Աշխատութեան պարզութիւնը թեթեւացնում է գործը, և յաջողութիւնը քաջալերում է մանուկներին : այստեղ է յառաջադիմութեան բոլոր գաղտնիքը :

Առանձին զուարճութիւն են զգում երեխաները զանազան իրեր կազապարել: Նոցա սովորեցնում են նախ երկրաչափական ձեւեր վերարտադրել, յետոյ այնպիսի առարկաներ որոնց նիւտը խորանարդ է. աստիճանաբար և նոր ջանքեր անելով, բայց առանց յոգնելու, այնքան այդ ջանքերը անզգալի են, նոքա յաջողում են աւելի բարդ բաներ շինելու, այնպիսի բաներ, որոնց պարզ ձեւերին նախապէս ծանօթացած են:

Նոյն եզանակը մի և նոյն յաջողութեամբ գործ է դրվում նկարչութեան և ուրիշ պարագայում ընկերի մէջ:

Երեխաների աշխատութիւնները զարգարում են դահլիճի պատերը, և այնպէս են դասաւորուած որ կարելի լինի նոցա արած յառաջադիմութիւնը տեսնել:

Մարմնամարդական վարժութիւնները, որոնք շատ յաճախ են գործ դրվում, կարծես ոչ այնքան առողջապահական նպատակ ունին, որքան երեխաներին լաւ կայնուածք և շնորհալի ձեւեր տալու դիտաւորութիւն, թէեւ մանուկների առողջութիւնն էլ չափվում է նոցանից: Այս վարժութիւնների կից երգերը մի տեսակ կենդանի մեջախաղ (միմիկա) են կազմում, որ երգուած բառերի հետ կապ ունի: Ուսուցչուհիները կատարում են նախ այդ բոլոր վարժութիւնները, և երեխաները նոցա դիտաւորութիւնները ըմբռնելով՝ անմիջապէս հետեւում են նոցա մեջախաղին այնպիսի զուարճութեամբ, որ կարծես թէ թատրոնումն են գտնվում: Ընդհանրապէս երգեցողութիւնը և մարմնամարդութիւնը, որ անբաժան է առաջինից, ինչպէս և խաղերը մեծ տեղ են բռնում օրիորդ Բլովի կրթական միջոցների մէջ:

Առարկայական դասերը, ինչպէս և եւրոպական նմանօրինակ հաստատութիւնների մէջ, ծառայում են իբրեւ գլխաւոր միջոց երեխաներին իրանց լեզուի և արտաքին աշտաքին աշխարհի հետ ծանօթացնելու: Այս դասերը շատ աւելի լաւ են մատակարարվում քան սովորական ուսումնարաններում: Այս մասին օրիորդ Բլովը մի կարգ սահմանեց որ որքան նոր նոյնքան օգտակար է: Գպրոցական տարուայ վերջին նա հաւաքել է տալիս այն բոլոր առարկայները, որոնք անհրաժեշտ են համարվում առարկայական

դասերը մանուկներին հասկանալի ու հետաքրքրական անելու: Այս իրերի մէջ մշտնում են և երեխաների սեպհական աշխատութիւնները, որոնք ցոյց են տալիս նոցա տարուայ ընթացքում արած յառաջադիմութիւնը: Ամէն ինչ վերցվում է, դահլիճի պատերը մերկանում, սլահարանները դատարկվում են, պէտք է նորից սկսել:

Այս հանգամանքը փոխանակ վճատեցնելու մի դարմանալի յորդոր ու եռանդ է տալիս երեխաներին իրանց կատարած գործը նորից սկսելու: Նոքա ձեռք են զարկում աշխատութեան, վերստին պատրաստում են հաւաքածուները, և ամէն մէկը ստիպուած է իւր կարողութեան համեմատ նպաստել դահլիճը զարգարելուն, որի վերայ մանուկները նայում են իբրեւ իրանց սեպհականութեան վրայ: Նոյն իսկ սեւումորթ երեխաները աշխատում են իրանց դահլիճը զարգարել, և նոքա նոյնքան անձնասիրութիւն են ցոյց տալիս այս գործում որքան և սպիտակները:

Մի մանկական պարտեզի փոքրիկ սեւերի համար իբր փորձ հիմնուեցաւ Սէն-Լուիում, որպէս զի կարելի լինի դատել թէ ի՞նչ աղբեցութիւն կարող է ունենալ կրթութիւնը ստրուկ ծնողներից ծնած երեխաների վրայ:

Այս գործին նուիրուած երիտասարդ սպիտակ ուսուցչուհին վկայում է թէ այս կարգի մանուկները միւսներից շատ ստոր են. նոքա վայրենի են, զայրացկոտ, ենթարկուած նոցա բնազդումներին, կրքոտ իրանց ցանկութիւնների մէջ, և ամենեւին չեն կարող իրանց անձի վրայ իշխել: Միով բանիւ, նորա կարծիքով այդ երեխաները դեռ եւս ծնուած չեն բարոյական կեանքի համար, և ըստ այնմ էլ պէտք է վարուիլ նոցա հետ: Երիտասարդ դաստիարակի ասածների ճշմարտութիւնը ստուգելու համար, բաւական է այս երեխաների զբօսանքներին ներկայ լինել. նոցա անտեղի չարութիւնները, անմիտ շարժումները, աղմկալի վճճերը չնչին բաների համար, և նոցա անընտալ խաղատրութիւնը մի ծիծաղաշարժ միանգամայն և անակնկնկալ տեսարան են ներկայացնում:

Սոքա էլ հաւաքածուներ են կազմում առարկայական դասերի համար. մէկը մի մեխ է բերում, միւսը ապակիի կտորներ,

երրորդը մի պատկեր, մի բառակենսու ծաղիկ, և այլն: Ուսուցչուհին այս բոլոր առարկաները խնամքով ամրացնում է մի տախտակի վրայ, և բոլոր փոքրիկ սեւերը հիանում են իրանց բերած պարզեւներն իրայ և զանազան նկատողութիւններ են առնում, որոնցից երեւում է թէ իրանք իրանցից շատ գոհ են:

Սէն-Լուիում, ինչպէս Բոստոնում և ընդհանրապէս Միացեալ Նահանգների բոլոր քաղաքներում, մանկական պարտէզների մէջ օրը մի անգամ են միայն պարապում. կէսօրից առաջ, 9 ժամից մինչեւ 12 ժամը: Սակայն վարժութիւնների յաջորդութիւնը, նոցա պէսպիսութիւնը, երեխաների ուշադրութիւնը գրաւելու և նոցա հետաքրքրութիւնը պահպանելու համար շարունակ գործ դրուած ջանքը, երգերը և անընդհատ շարժումները, — այս բոլորը քիչ չէ յոգնեցնում դաստիարակներին, որոնք իրանց ոյժերը կազդուրելու պէտքն ունին օրուան մնացած մասում:

Բայց օրիորդ Բլովը իւր բոլոր օգնականներին ներշնչել է այն սրբազան հուրը, որով ինքը ոգեւորուած է. նոքա կարծես չեն դժուար թէ յոգնած են, այնքան միտքը իշխում է մարմնի վրայ, և միայն մի հոգեբանական երեւոյթ կարող է բացատրել նոցա ցոյց տուած գործունէութիւնը:

Բացի իրանց ամենօրեայ ծանր պարտաւորութիւններից, նոքա շարունակում են իրանց ընտրած ու սիրած առարկայով պարապել, ներկայ դառնալով այն տասն և վեց դասախօսութիւններից մէկին կամ միւսին որ շարժումն ընթացքում հրապարակաւ աւանդվում են, և որոնք հետզհետէ սահմանուել են ուսուցչուհիների կրթութեան պակասը լրացնելու համար: Այս մի տեսակ փոխադարձ ուսումնասիրութիւն է, որին օրիորդ Բլովի ներշնչմամբ իւրաքանչիւրը նպաստում է: Ահա այսպէս հիմնադրի առաջին աշակերտուհիները, որոնց նա պատրաստեց սորանից տասը տարի առաջ և որոնք այսօր նորա անձնուէր օգնականներն են, փոփոխակի երեւում են ուսուցչական ամբիոնի վրայ, որտեղից ուսուցանում են նորեկներին, և աշակերտական նստարանների վրայ, ուր իրանք բարձրագոյն կրթութիւն են ստանում: Նոքա զբաղվում են կրթու-

թեան բարձր խնդիրներով, գրականութեամբ և փիլիսոփայութեամբ՝ նոյն իսկ օրիորդ Բլովի ներկայութեամբ: Ուսուցչապետի առաջնորդութեամբ վիճաբանութիւններ են արծարծվում դասախօսուած գիտութիւնների վրայ. այս վիճաբանութիւնների մէջ, որոնց ամենքը մասնակից են լինում, քննվում եւ լուսաբանվում են զանազան մութ ու հասկանալի խնդիրներ, որոնց մասին որոշ եզրակացութիւնների են հասնում:

Բոստոնի և Սէն-Լուիի փորձերը մեծ ազնուկ հանեցին և իրանց հետեւողներն ունեցան. ինչ որ երկու առատաձեռն, խելացի ու բարեսիրտ կանայք յաջողեցան անել իրանց ծննդեան քաղաքում, նոյնը որիչները փորձում են անել երկրի զանազան տեղերում եւ այն ոչ առանց յաջողութեան:

Բազմաթիւ քաղաքներում, Սան-Ֆրանցիսկոյում, Միլվանկէում, Նիւ-Եորքում եւ, մասնաւոր անձինք, առանձին եկեղեցիներ, կանանց մասնաժողովներ, Ժուժկալութեան ընկերութիւններ մանկական պարտէզներ են հիմնում, և չնայելով ոմանց հակառակութեանը Ֆրէբէլի կրթական եղանակի դէմ և այլոց յարուցած կասկածներին նորա գործադրութիւնը ընդհանրացնելու հրնարաւորութեան մասին, սխալած գործը հետզհետէ զարգանում է:

Սակայն որքան և մեծ յոյսեր խոստանայ այս գեղեցիկ շարժումը, չէ կարելի ուրանալ որ մասնաւոր անձանց շնորհիւ հիմնուած հաստատութիւնները, որքան և բազմաթիւ լինին, անկարող են և երկար ժամանակ, եթէ ոչ միշտ, անկարող կը լինին ժողովրդի բոլոր պիտոյքներին լրումն տալու: Եւ յիշաւ, ի՞նչ են 50 միլիոն բնակիչ ունեցող երկրի համար այն 252 մանկական պարտէզները, որոնք պարունակում են ընդամենը 8,871 երեխայ: Ենթադրելով թէ առատաձեռնութիւնն անսպառ լինի, և նա միշտ անապառ է Միացեալ Նահանգներում, մասնաւոր երբ խօսքը կրթութեան վրայ է, կարելի է գուշակել որ մանկական պարտէզների այժմեան թիւը տասը տարում կը կրկնապատկուի, և թէ հետզհետէ նոցա թիւը նոյն համեմատութեամբ կ'աւելանայ: Այս ի հարկէ մեծ բան է իբրեւ արդիւնք

համակրական շարժման յօգուտ մանուկներէ՝ ըրի, բայց և այնպէս ընդհանուր դրութիւնը շատ չի փոխուիլ և պէտքերը համարեա նոյնը կը մնան :

Պէտք է խոստովանել որ Միացեալ Նահանգներում հասարակ ժողովրդի որդոց կրթութեան մէջ մի գլխի պակաս կայ, որ բոլորում է դպրոցական կայսրակերպութեան թերութիւնից : Երեխաները սկսում են ուսումնարան դնալ միայն 5 կամ 6 տարեկան հասակից, և ծնողները մեծ մասամբ օրական աշխատանքով պարտւած լինելով՝ նոցա որդիքը հսկողութիւնից և առաջնորդութիւնից զուրկ են մնում և ամէն տեսակ փողոցային վտանգների ու վնասակար ազդեցութիւնների են մատնւում իրանց կեանքի առաջին շրջանում, որ դուցէ ամենակարեւորն է, այն շրջանում երբ նոքա պէտք է լաւ սովորութիւններ ընդունին մոքի կըրթութիւնից առաջ :

Այս խնդիրը, որ ամենայն իրաւամբ դաստիարակների ծանր հոգածութիւնների առարկայ է եղած, միայն այն ժամանակ կարող է վերջնականապէս լուծուիլ, եթէ Նահանգները իրանց վրայ առնեն երեխաների սկզբնական կրթութեան բեռը, հոգը և պատասխանատուութիւնը : Ինչ որ կարելի լինի անել այս ընդհանուր միջոցից դուրս, նոյն իսկ առանձին անհատների ամենամեծ ջանքերը, իբրեւ մի մասնաւոր արժէք ունեցող բան պիտի նկատուի : Այս բանը շատ լաւ են ըմբռնում Ամերիկացիք և շատ լուրջ մտքեր արդէն զբաղուած են մի գոհացուցիչ ելք գտնելու . ձեռնհաս անձինք, որոնց հեղինակութիւնը կրթական խնդիրների մէջ հանրածանօթ է, ուսումնասիրում և համեմատում են օտար երկիրների սլլ և այլ դպրոցական կազմակերպութիւնները, աշխատելով գտնել մի միջոց որով կարելի լինի թէ՛ ծնողաց և թէ՛ երեխաների շահերը պաշտպանել :

Միւս կողմից, ամէն տեսակ կարծիքներ են յայտնւում Ֆրէբէլի կրթական սխաւմի վրայ . ոմանք ընկերական նկատումների վերայ յենելով՝ հակառակ են այդ սխաւմի տարածմանը . ուրիշները նպաստաւոր կերպով են խօսում նորա վրայ : Իրարու հակառակ գործողութիւններ էլ են տեսնւում այստեղ մանկական պարտեզը եֆրեւ ֆոքս մի-

ացնում են ուսումնարանի հետ . իսկ ուր որ փորձն արդէն եղած է, հրաժարւում են նորանից իբրեւ շատ դժուար իրադործելի : Այսպէս ահա Բոստոն քաղաքը 1870 ին մի մանկական պարտեզ բանալուց յետոյ՝ 1879 ին փակեց նորան չնայելով այն նպատաւոր կարծիքին որ ուսումնարանների վերատեսուչը յայտնել էր այս հաստատութեան մասին 1876 ին :

Վերջապէս մի քանի Դպրոցական վարչութիւններ, իբրեւ հասարակաց կարծիքի թարգմաններ, իրանց տարեկան տեղեկագրի մէջ ցանկութիւն են յայտնում, որ մանկական պարտեզները հասարակային կրթութեան սխաւմի մէջ ընդունուին և նորա առաջին աստիճանը կազմեն :

Բայց այստեղ դրամական մեծ դժուարութիւններ են առաջ գալիս, և երկիւղ կայ որ՝ չնայելով ամերիկական ժողովրդի հարստութեանը և առատաձեռնութեանը, Նահանգների կառավարութիւնները չկարողանան պէտք եղած հարկերը սահմանել մանկական պարտեզների ծախքերը հոգալու այն չափով որ նոցա այժմեան կազմակերպութիւնը պահանջում է : Ընդունելով որ ժողովրդի տասներկուերորդ մասը բաղկանում է 2 ից մինչեւ 3 տարեկան երեխաներից, մենք կ'ունենանք 4,180,000 երեխաների ահագին թիւը, որոնց համար հարկաւոր կը լինէր 41,800 շինութիւն ունենալ միւս ուսումնարաններին կից եւ 170,000 ուսուցչուհի, թող օգնական վարժուհիները :

Արդ ի՞նչպէս պիտի հոգացուին այսպիսի պիտոյքները : Ոչ ոք չգիտէ : Մեր սովորական տեսակէտից նայելով խնդրի վրայ՝ դժուարութիւնները անյալթելի են երեւում և սակայն մարդիկ վստահութիւնները չեն կորցնում : Երբ խնդիրը մեծամեծ շահերի վրայ է, Ամերիկացիք գիտեն այնպիսի զոհողութիւններ անել, որոնցով ուրիշ տեղ անկարելի համարուած բանը հեշտութեամբ գլուխ է բերւում : Այս դարմանալի ազդի մէջ, որին ո՛չ աւանդութիւնները, ո՛չ անցեալի հետ կապերը չեն կանգնեցնում իւր յառաջագիմութեան ճանապարհի վրայ, և ուր օգտակար համարուած գաղափարները այնպիսի արագութեամբ մտնում են իրական կեանքի մէջ, բան չկայ որ կարողանայ

երկար ժամանակ անհնար համարուիլ :

Սակայն եթէ այս ակնկալութեան հա-
կառակ մանուկներն պաշտպանութեան գոր-
ծը իբրեւ մի մասնաւոր և անհատական
գործ մնալու էլ լինի , դարձեալ նա բաւա-
կան է ամերիկական կանանց իտուքը ապա-
հովելու , որոնք այս գեղեցիկ հաստատու-
թեան հիմը դրին և ամենայն անձնազոհու-
թեամբ աշխատում են նորա զարգացման
համար :

Ս. ՊԱՆԱՍԱՆԵԱՆ
(վարժարան)

ԱԶԳԱՅԻՆ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՆԵՐՄԷՍ ՍՐԲԱԶԱՆԻ Ի ԾՈՒԸՍՏԱՆ ԳԻԻՂ ՄՇՈՅ

Հոգեւոյս Ներսէս Սրբազանի մահուան առթիւ
դաւառաց մէջ ի յայտ եկած խորին վշտի արտայայ-
տութիւններն որչափ հնար է հրատարակած ենք ,
այժմ իբր նմոյշ կը հրատարակենք հետեւեալն որ
փոքրիկ դիւղերու զգացմանց վրայ դադարաւ մը կու-
տայ մեզ , և որ ցոյց կուտայ այն շինական պարզու-
թիւնն , որով Յուլիանի գիւղացիք պատուած են
Հոգեւոյս Պատիւարքի սիրելի յիշատակը :

Նոյեմբեր 3 շաբաթ երեկոյ , դիւղիս ե-
կեղեցւոյ մէջ պատրաստուած էր հանգուց-
եալ Սրբազանի դադաղին օրինակը , այս-
պէս . եպիսկոպոսական զգեստով , թագիւ
և դաւաղանաւ պատկերացեալ էր կէս մը
աթոռին վրայ և կէս մը դադաղին մէջ օ-
ծելոյն սուրբ մարմինն , շուրջն մեծամեծ
կերօններ և խնկանոցներ , որ շարունակ
կը վառէին և կը ծխային , ընդ որս և
դպրոցական սանուք , որպէս հայրազուրկ
սղաւորք , սեւ շապիկներով դադաղին շուրջ
ծուռկի վրայ ձեռուընին աչերնուն դրած ,
ջերմաջերմ կարտասուէին ի մահ հայրախնամ
Պատրիարքին . կարծիք չկայ թէ այս զգա-
ցում աշակերտաց սրտին մէջ զարթեցնողն
իրենց ուսուցիչն լինէր : Նեկեղեցւոյ քա-
հանայք և դպիրք , նոյնպէս սեւ ծած-
կոյթներով , հանգստեան կարգը կատարելով
աւարտեցաւ երեկոյեան տխուր հանդէսն :
Ըստ մաշտոցին՝ կիւրակէ առաւօտ եւս ա-
շակերտք մի և նոյն սգազգեաց վիճակիւ

դադաղին շուրջն առած , կարծես դիտող
ժողովրդին ինքնազգաց լացը կը շարժէին :
Քահանայք առաւօտեան առաջին ժամու
օրհներգը լրնցնելով «Փառք ի բարձունս»էն
առաջ սկսեցաւ հանգուցելոյն թաղման
կարգ կատարել , տխուր երգեցողութեամբ
«Իշխանք հալածեցին զիս» Սաղմոսին եր-
գով , ըստ մաշտոցին , մինչեւ «Ողորմած
Աստուած» թաղման շարականն , և ապա
դպրոցականաց մեղմ ձայնիւ «Փառք ի բար-
ձունս» երգ երգեցին և վերջացուցին . առա-
ւօտեան երկրորդ ժամու աղօթքէն զկնի ,
կատարուեցաւ եօթներորդ աւուր հան-
դստեան կարգ . (աւելորդ է ըսել որ քա-
հանայի մինն ալ դադաղին գլուխ կանգ-
նած քահանայի թաղման ընդհանուր կարգ
կը քաղէր լռելեայն) : Զկնի սոյն կարգին ,
կարճ և սրտառուչ դամբանական մը խօս-
ուեցաւ դպրոցի ուսուցչէն , յորում տըխ-
րադեցիկ խօսքեր ամենուս սիրտ վղձկե-
տալով ի լաց շարժեցին :

Աստ էր տեսանել դպրոցական սա-
նունց հեկեկանք որք շուրջ զդադաղին կը
մորմոքէին և արցունքով կը թանային զծած-
կոյթ դադաղին . . . ինչպէս նաեւ ներ-
կայ ժողովուրդն որ , որպէս ի ներկայու-
թեան Նորին Օծութեան , օծեալ մարմ-
նոյն , կարգ ընդ կարգ , համբուրելով զա-
ւետարանն որ ի ձեռին հանգուցելոյն , մեկ-
նեցաւ սուգ ի սիրտ : Նոյն օր մինչեւ երե-
կոյ դպրոցականք ի նշան սգոյ տուններէն
դուրս չենելով ոչ ոքի հետ շտեմնուեցան , և
երեկոյին վերստին կատարուելով քառասնօր-
եայ հանդստեան կարգ , ըստ մաշտոցին , և
ապա քահանայից միոյն միջոցաւ խօսուած
քանի մը մխիթարական և յորդորական խօս-
քերով ժողովուրդն մխիթարուելով , արձակ-
ուեցաւ , աչք ի յերկինս սպասելով նորոգ
արժանաւոր փոխանորդի մ'ընտրութեան ,
որով թերեւս իւր հեծեծանք մեղմանան և
իւր վշտերը սփոխուին :

Ծուլստան , նոյ . 8

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԶՈՒԱՐԹՆՈՅՆ ԸՆԴ ՄԱՆԿԱՆ

Իջեալ զուարթուն մի լուսարփի,
Որորանին յեց առ եզեր,
Թըւի դիտել զիւրն պատկեր
Որպէս ի ջուրըս վրտակի:

—Մանկի՛կ չըքնաղ, ես ինձ նըման,
Ընդ իս, ասեր, ե՛կ երթիցուք:
Ի միասին ե՛կ բերկրեցուք
Զի քեզ երկիր է անարժան:

Զիք անթերի անդ ջընծուծիւն.
Տանջի անդ յիւրն հաճոյս հոգի,
Յերգոց հըրճումնըս սուգ խառնի,
Եւ հեշտութեանց դոյ հեծուծիւն:

Կից են տօնից միշտ արհաւիրք.
Եւ տիւ խաղաղ՝ պոյծառազգեաց
Ընդդէմ վաղուին սեաւ ամպրոպաց
Զեղեւ երբէք ինչ երաշխիք:

Եւ ի՞նչ, գայեհօն թախիծք և հոգք
Խռովել զանրիծ քոյին ճակատ,
Եւ մըթասցի՞ն դառն արտասուօք
Ականդիքդ երկնազըւարթ:

Քաւ մի՛ լիցի. յեթերս ի վեր
Սաւառնաթեւ սլացիս ընդ իս,
Զերծաւ ըզքեզ բարձրեալըն Տէր
Յաւուրց պարտեացըզ կենցաղիս:

Ոչ դք ի քոյդ աղգատոհմէ
Ի սեաւ հանդերձս համակեցի.
Թող ընկալուչ յետինդ բոպէ
Իբրեւ ըզժամ քո նախ լիցի:

Լիցին ճակատք անդ լուսավառ,
Եւ ոչ նըշան ինչ տապանի,
Յանրիծ հանգոյն քոյդ պայմանի
Ի օրն յետին դերապայծառ:—

Եւ թօթափեալ ապա վազվաղ
Ըզճիւնաթոյր թեւըս զուարթոյն,
Թըւեաւ յաւերժն ի բնակութիւն.
Մեռաւ որդիդ, հէք մայր, աւա՛ղ:

ՌԸՊՈՒՆ

Թարգմ.
Ա. Հ.

ՔԱՂՈՒԱԾ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՑ

24-30 ՆՈՅԵՄԲԵՐ

ԱՐՏԱՔԻՆ

Եգիպտական կառավարութեան դէմ
Ընդհ. Պարտուց Յանձնախմբին կողմէ բաց-
ուած դատին մէջ, Միջազգային դատարանն
իւր վճիռը տուաւ, յայտարարելով թէ ե-
գիպտական կառավարութեան գործը (Պար-
տուց յատկացեալ հասցեթէսերն իւրացնելն)
ապօրէն է, ըստ որում յիշեալ միջազգային
յանձնախմբը միակ ձեռնհաս մարմինն է
պարտուց կարգադրման օրէնքը փոփոխելու:
Հետեւեալէս պարտուց յատկացեալ գումար-
ները կառավարական գանձը զրկող եգիպ-
տացի և անգլիացի պաշտօնատարք, դա-
տապարտուած են յանձնախմբին վճարել
այդ գումարներ: Բայց ըստ Թայմի տեղե-
կութեանց, այս վճիռ արտասանուած չէ
դեռ և չարաթ մը յետաձգուած է:

— Փարիզի Օսմանեան Պանքան բանակ-
ցութեան մէջ է Օսմ. կառավարութեան հետ
Բուվէլի երկաթուղեաց միացման համար:
Պանքային առաջարկներն հիմնեալ են 30
միլիոն ֆրանքի դրամազլխով ընկերութեան
մը կազմութեան վրայ: Այս ընկերութիւն
պիտի կազմուի Փարիզի Բոնիֆատտ Կոմիտէի
դրամատան գործակցութեամբ: Ընկերու-
թիւնը պիտի երաշխաւորի ոչխարաց տուր-
քէն առնուած հասոյթով մը, ընկերութեան
թողեալ երկաթուղեաց հասոյթով, և արեւ-
ելեան երկաթուղեաց չահագործման հա-
մար կնքելի պայմանագրերէն Օսմ. կառա-
վարութեան ստանալիք զուտ հասոյթով:
Բայց այս վերջին երաշխաւորութեան վրայ
դեռ համաձայնութիւն չէ դոյացած:

— Թոնքինի խնդրոյն վրոյ խորհրդարա-
նին մէջ կատարեալ յողթանակ մը տանելէ
և վստահութեան նոր քուէով մը զօրանալէ
յետոյ, անալինկալ դժուարութիւն մ'եղաւ
Պ. Ժիւլ Ֆէրրիի նախարարութեան դէմ:
Երեսփոխանաց և Մերակոյտի ժողովոց մի-
ջեւ անհամաձայնութիւն ծագեցաւ: Մերա-
կոյաը բարեփոխած էր իւր կազմութեան և
ընտրութեան եղանակն, և այս բարեփոխ-
ման ծրագիրն Երեսփոխանաց ժողովոյն ներ-

կայացուած էր . ըստ որում երկու ժողովոց համամտութիւնն հարկաւոր է ծրագիր մը օրէնք ընելու համար : Բայց երեսփոխանաց ժողովն աւելի յառաջ գնաց բարեփոխման մէջ , և մինչ ծերակոյտը ցկեանս անդամակցութեան սկզբունքը ջնջելով հանդերձ կը պահէր իւր այժմեան ցկեանս անդամներն , երեսփոխանական մեծամասնութիւնը Յերակոյտին արդի ցկեանս անդամաց իսկ ջնջումը քուէարկեց : Ասոր վրայ թէեւ նախարարական փոփոխման զրոյցներ ելան , բայց չըստուգուեցան :

Վերջին հեռագիրը կը ծանուցանեն թէ երեսփոխանական ժողովն ընդուներ է Յերակուտի ընտրութեան վերաբերեալ նոր ծրագիրն այն փոփոխութեամբ զորս Յերակոյտը մուծած էր անոր մէջ : Այս ծրագրին համեմատ , ծերակուտական ընտրութիւնը պիտի կատարուին յառաջիկայ յունվար 28ին :

—Պ. Արտաթոն Երեսփոխանական ժողովոյ դեկտ. 1ի նստին ներկայեց երեսփոխանական ամբողջ վերաբաշխման ծրագիրը : «Բարեբաղդ եմ որ , ըսաւ , հաւատարմ ստացած եմ թէ Ընտրական բարեփոխումն ծրագիրը պիտի քուէարկուի Լորտերու ժողովէն , որով վերաբաշխման ծրագիրը ներկայեցու արգելք չէ մնացած : Ուրախ եմ նաեւ որ վերջ գտած են երկիրը բաժնող և յուզող անհամաձայնութիւնը » : — Վերաբաշխման ծրագրոյն սկզբունքը սա է թէ 15,000է աւելի բնակիչ չունեցող քաղաքներն այլ ևս չպիտի կրնան իրենց յատուկ Երեսփոխան ընտրել , այլ շրջակայ գաւառին և գիւղորէից հետ միացնելով երեսփոխան մը պիտի ընտրեն . մինչեւ 50 հազար բնակիչ ունեցող քաղաքներն ըստ առաջնոյն մէկ երեսփոխան պիտի ընտրեն . մինչեւ 165,000 բնակիչ ունեցող քաղաքներն՝ երկերկու երեսփոխան . աւելի մեծ քաղաքներն՝ այժմեանէն աւելի երեսփոխաններ ընտրելու իրաւունք կըստանան : Այսպէս , Լիվրուէլ , որ այսօր երեք երեսփոխան ունի , պիտի ընտրէ այսուհետեւ 9 երեսփոխան . Ալաքսո և Պիրմինկէմ՝ 7 ական փոխանակ 5 ականի . Մանչէսթըր՝ 6 , փոխանակ 3ի : Ընդհանուր երեսփոխանաց թըւոյն վրայ 18 նոր երեսփոխանք միայն պիտի աւելնան , թէեւ ընտրողաց թիւը կէս

առ կէս կաւելնայ , 4 միլիոնէն 6 միլիոնի բարձրանալով : Այս 18 երեսփոխանաց 12ը Սկոթլոյ համար կաւելնան : Իռլանտայի երեսփոխանաց թիւը նոյն պիտի պահուի : Յանձնախումբ մը կազմուած է ընտրական շրջանակներուն սահմանները գծելու համար :

Լորտերու ժողովը դեկտ. 4ի նստին նոյնութեամբ ընդունեց վերջնապէս Պ. Արտաթոնի ընտրական իրաւանց ընդարձակման ծրագիրը : Նոյն օրն Երեսփոխանական ժողովն ալ երկրորդ անգամ քուէարկեց Արտաթոն վերաբաշխման ծրագիրը :

— Անգլիոյ արտաքին գործոց նախարար Լորտ Կրանվիլ հրաժարեցաւ Ֆրանքօ-Չիւնական խնդրոյն միջնորդելէ , հասկցած լիւնելով որ անկարելի է համաձայնութիւն գոյացնել այդ երկու տէրութեանց միջեւ :

Ն Ե Ր Ք Ի Ն

Պերլինի լրագիրը կը ծանուցանեն թէ Պիզմարը իշխանը ջերմ շնորհակալութիւն յայտնէր է Պերլինի օսմանեան դեսպան Սալիս փաշայի , որ կրցած էր Քոնկոյի դեսպանախորհրդին մէջ՝ ուր կը բազմի իբր օսմանեան պատուիրակ , կարեւոր տեղեկութիւններ հաղորդել կեդրոնական Ափրիկէի Խալամ ժողովրդոց , անոնց տրամադրութեանց , ինչպէս նաեւ այն իրաւանց վրայ զոր Օսմանեան Խալիֆան ունի առ հասարակ բոլոր Խալամաց վրայ :

— Սուղլապահական խորհուրդն ի նիստ գումարեցաւ այս երեքշաբթի , և յետ երկար վիճաբանութեան , որոշեց ջնջել Վառնայէն , Դանուբէն և ուսական նաւահանգիստներէն եկող չոգենաւուց քարանթիւնան , և առժամեայ կերպիւ միայն 24 ժամու քարանթիւնա մը հաստատել առնոց համար . իսկ Ֆրանսայէն , Սպանիայէն և Խալիպայէն եկող նաւուց և ուղեւորաց համար դրուած քարանթիւնան հինգ աւուր իջուց :

Առողջապահական խորհրդոյ սոյն որոշումը կայսերական կառավարութեան վաւերացման պիտի մատուցուի : Նկատելով որ քոլերան բոլորովին անհետացած է Եւրո-

սլայէն, կը կարծուի որ կառավարութիւնը վերոյիշեալ որոշմանց դործագրութիւնը պիտի հրամայէ :

— Փիլիպէի Հիլըլ լրագիրն երկար յիշատակագրի մը պատճէնը կը հրատարակէ որ Արեւելեան-Բուսէլի յոյն բնակչաց կողմէ ուղղուած է Պերլինի պաշտօնագիրն ստորագրող տէրութեանց : Այս պաշտօնագիրն միտա մի կը թուէ թէ ինքնօրէն գաւառին կազմական կանոնագրին ինչ ինչ կէտերը բռնաբարուեր են, ի վնաս յոյն բնակչաց, և տէրութեանց ուղարկութիւնը կը հրաւիրէ իրաց վիճակին վրայ :

— Ի բաց առեալ Ֆրանզէական-Մըրմըրեան վաճառատան սնանկութիւնը, մայրաքաղաքիս հրապարակին վրայ ուրիշ հայ վաճառատուն մը սնանկութիւն չէ հրատարակած, կամ հրատարակելու վրայ չէ : Հետեւապէս, անհիմն է այն լուր թէ ուրիշ հայ վաճառատուն մը 60,000 ոսկւոյ բացով դադրեցուցած է իւր վճարումներ : Ֆրանզէական-Մըրմըրեան տան բացն է, ըստ մեր տեղեկութեանց, 8,000 ոսկի :

Հայ վաճառականը ընդհանրապէս պահպանողական են, չահադիտական յանդուգն ձեռնարկութեանց հետ դործ չունին : Ուստի, եթէ իրենց յոյն մրցակիցներուն չափ մեծ շահեր ալ չընեն յաջող առիթներու մէջ, տագնապներու առեւն անոնց չափ չեն վնասուիր : Հիմա ստուգիւ տագնապ մը կը տիրէ Կ. Պոլսոյ հրապարակին վրայ : Բայց ցարդ հրեայ և յոյն վաճառատուններ միայն զո՞հ գնացին այդ տագնապին : Նշանակութեան արժանի չէ մանֆաշիոնաի փորձիկ վաճառականաց և Կոստանթնուքի վիճակն, որք ինչ ազդէ ալ ինչին՝ շատ նեղ կացութեան մէջ են այս միջոցիս, և անոնց մէջ աւելի շատ են սնանկացողք : Իսկ գուհութեամբ կ'իմանանք թէ մեծ հայ վաճառատունք, մանաւանդ անոնք որ Մանչէսթըրի հետ դործ կ'ընեն, թէեւ նեղութիւն դործոց ընդհանուր դադարումէն, աղահոգ վիճակի մը մէջ են շնորհիւ իրենց փորձեալ խոհեմութեան և զգուշութեան :

— Թուրքիոյ երկաթուղեաց և մանաւանդ Մէրսին-Թարսուս-Ատանայի երկաթուղւոյն դործին հետ յարաբերութիւն ունեցող ազդեցիկ անձինք ոմանք դեկտեմբին պիտի գումարին Լոնտոնի մէջ ընդ նա-

խագահութեամբ Սըթըրլանտի մեծահարուստ Դքսին : Հնդկաստանի հետ դործ ունեցող նշանաւոր Անգլիացիք և ընդհանրապէս Միջերկրականի և Պարսկային Ծոցի միջեւ երկաթուղւոյ միջոցաւ հաղորդակցութեանց հաստատման կարեւորութիւն ընծայող անձինք բանախօսութիւններ պիտի ընեն այս գումարման մէջ :

— Օսմանեան Իրաւագիտական դպրոցէն առաջին անգամ լինելով 45 աշակերտք ելան այս տարի, յետ ընդհանուր քննութեանց որք ամառ մէջ վերջացան : Այս ուսումնաւարտք ստացան Լիւսնէ ան Տրոսի տիպղոսն, և անոնք որ տարի մ'եւս չարունակեն իրենց ուսում, պիտի ստանան Տոքթորի տիպղոսն, որ կը տրուի չորրորդ տարւոյ վերջը :

Այս 45 աշակերտաց հինգն Հայեր են, երեքն Յոյներ, երկուքը Սուրիացի քրիստոնեայներ և մնացեալք Թուրք են :

Հայ ուսումնաւարտից անուններն են Գրիգոր Էֆէնտի Գալայճեան, Ռէճայի Էֆէնտի (Տիարալէքիցի), Յարութիւն Էֆէնտի Զիլճեան, Սարգիս Էֆէնտի Ճիյէրեան և Գարեգին Էֆէնտի Ձէրքէշեան :

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Քաղաքական ժողովն իւր չորեքշաբթի աւուր նստին մէջ նկատողութեան առնելով Կեդրոնական վարժարանի բացման համար 1882ի հանդանակիչ մասնախմբի տեղեկագիրն, ինչպէս նաև Ուսումնական խորհրդոյ եզրակացութիւններն, և բանակցելով հանգանակիչ Մասնախմբի կողմէն ներկայացուցիչ կարգեալ Մ. Չերազ Էֆէնտիի հետ, հետեւեալ բանաձեւն ընդունեց :

Պատճէն Բանայեալն

« Ազգային վարչութեան Քաղ. Ժողովը նոյնութեամբ կ'ընդունի 1882ին Հոգեւոյս Տ. Ներսէս Արքազան Պատրիարք Հօր նախաձեռնութեամբ գումարուած Հանգանակող մարմնոյն կողմէ ի ձեռն Գործադիր Մասնախմբին նոյեմբեր 16 թուականաւ մատուցեալ յայտագիրն, և իւր գոհունակութիւնը կը յայտնէ առաջադրեալ ձեռնար-

կուժեանց համար . սակայն նկատելով որ Աղգային Կեդրոնական վարժարանին բացման պէտքն անհրաժեշտ է և հոգեւոյս Սրբազան Պատրիարք Հօր ամենամեծ բաղձանքն եղած էր նոյն վարժարանին հաստատութիւնն . նկատելով որ զայն բանալու համար երկու հազար Օսմ . ոսկւոյ գումարի մը պէտք կայ , որպէս զի Ղալաթիոյ կալուածոց սնտուկին պարտքը վճարուի , Աղգ . Վարչութեան Քաղաքական Ժողովն հարկ կը համարի որ կատարելի հանգանակութեան առաջին արդիւնքէն նախապէս երկու հազար ոսկւոյ գումար մը դրուի իւր արամադրութեան ներքեւ Ղալաթիոյ Կալուածոց սնտուկին պարտքն վճարելու և Կեդրոնական վարժարանին անմիջական բացումն ապահովելու համար :

«Քաղաքական Ժողովն արժան կը համարի նաեւ սոյն աղգային վարժարանը նուիրել յանուն հոգեւոյս Սրբազան Պատրիարք Հօր , որ ջերմագին աշխատած էր անոր հաստատութեանը :»

— Աղգային Վարչութեան խառն ժողովոյ կողմէ Պատրիարքական Փոխանորդ Հօր յանձնուած նոր պաշտօնին վաւերացումը խնդրող Թագրիբին նկատմամբ Բ . Դոնէն դիտողութիւններ եղած լինելով , Քաղաքական Ժողովն հարկ համարեց յառաջիկայ չորեքշաբթի օր խառն ժողով գումարել , ըստ օրինի պարտուպատշաճ տնօրինութիւնն ընելու համար :

Կը լսենք թէ խառն ժողովոյ այդ գումարման նպատակն է Պատրիարքական Տեղապահի ընտրութիւն կատարել ըստ արամադրութեան Աղգային Սահմանադրութեան :

— Քաղ . Ժողովը Տնտեսական խորհրդոյ կողմէ ներկայացեալ Զօպանեան Միհրան էֆէնտիի հետ խորհրդակցութեամբ , ի նկատ առաւ Մուգաթայի յետնեալ մեծաքանակ տրոց ցանկն , յորում նշանակեալ էին իւրաքանչիւր գաւառի ցարդ անվճար մնացած սլարքն , և որոշեց յատուկ շրջաքերականաւ և հնգետասանօրեայ պայմանաժամաւ յիշեալ տրոց գանձումը պահանջել գաւառական վարչութիւններէն :

— Կրօնական Ժողովն երկուշաբթի օրն ի նիստ գումարուելով ընդ ատենապետութեամբ Գեր . Խորէն Նարպէյ Սրբազանի , Պատրիարքական Գեր . Փոխանորդ Հօր տե-

ղեկագրոյն վրայ յատեան կոչեց Բալուցի աղջիկն (որոյ բռնի ամուսնութեան պարագայները պատմած ենք արդէն) եղբայրն , որդեգրող հայրն ու մայրն , և հարցաքննեց զանոնք . սակայն իւր վերջնական որոշումը վերապահեց յառաջիկայ նստին :

Ժողովն , բացի այլ և այլ տնօրինութիւններէ , որոշեց պաշտօնական ծանուցմամբ հերքել լրագրաց ոմանց այն յայտարարութիւնը թէ այս կամ այն եպիսկոպոսն հաւատարիմ են Օսմանեան Պետութեան , մինչդեռ ամբողջ եպիսկոպոսական դասն իւր հովուութեան յանձնեալ Ժողովրդովն հաւատարիմ է առ մեծապօր Կայսրն և առ բարեխնամ Կառավարութիւնն :

— Կը յիշեն ընթերցողք թէ Քաղաքական Ժողովն մայրաքաղաքիս Թաղական խորհրդոց ներկայացուցչաց հետ համագումար նիստ մ'ընելով , համաձայնութեամբ որոշեց որ Բ . Դրան Թագրիբի մը մատուցուի Կայսերական Կառավարութեանէն խնդրելու համար որ շնորհ ընէ աղգային հաստատութեանց եկեղեցեաց , դպրոցաց և ըն կալուածոց ապահովութեան համար մի կարգադրութիւն , որպէս զի այդ հաստատութիւնը նիւթապէս բարգաւաճելով՝ իրենց բարոյական նպատակին լիովին կարենան ծառայել : Զորեքշաբթի օրուան Քաղաքական Ժողովն նոյն Թաղրիբը ընթերցելէ յետոյ՝ նկատելով որ այսպիսի կենսական խնդիր մը եթէ խառն ժողովոյ վաւերացումն չընդունի , չկրնար օրինական թերութենէ զերծ լինիլ , և միանգամայն խնդիրն իր բարձր կարեւորութիւնն ստացած լինիլ , որոշեց նոյն Թագրիբը խառն ժողովոյ յառաջիկայ նստին ներկայացնել և ապա վարժանն տնօրինել :

— Երբեմն միաբան Ս . Երուսաղիմայ Տ . Զօքարիա վարդապետ , որ ի Սելանիկ եւ Եանեա երթալու և տեղացի գաղթական և պանդուխտ հոյ ժողովուրդն հոգեւոր այցելութեամբ մխիթարելու պաշտօն ունէր , երէկ մայրաքաղաքս եկած լինելով , Գեր . Պատրիարքական Փոխանորդի ներկայացաւ և իր կանխահաս գալստեան մասին պատճառարանեց թէ ձմեռան նստուկութիւնն անկարելի կընէր իրեն երթալ յԱնեա :

Պատրիարքական Փոխանորդն յանձնարարեց իրեն որ այդ պատճառաբանութիւնը դրով մատուցանէ Աղգ . Վարչութեան Կրօնական Ժողովոյ :



GRANDS MAGASINS DU
Printemps

NOUVEAUTÉS
PARIS

Vient de Paraître

le magnifique Catalogue général
illustré, contenant plus de 450 Gravures
des nouveaux Modèles pour la Saison

Hiver 1884-85

Envoi gratis et franco sur demande
affranchie adressée à

**MM. JULES JALUZOT & Co
PARIS**

Sont également envoyés FRANCO, les échan-
tillons de tous les tissus composant les immenses
assortiments du Printemps.

Expéditions dans tous les Pays du Monde.

INTERPRÈTES ET CORRESPONDANCE EN TOUTES LANGUES

ՀԱՄՈՎ ՀՈՏՈՎ

ԵՐԿԱՍԻՐԵՅ

ԳԵՐ. Գ. Ծ. Վ. ՄՐՈՒԱՆՁՏԵԱՆՅ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ (ԱՐԱՄԵԱՆ)

Գերապատիւ Հեղինակին սոյն նոր գործ,
արժանի ծնունդ իւր տաղանդին և հմտու-
թեան, արդիւնք ուշադիր և մանրակրկիտ
խուզարկութեանց և քննութեանց որ կը պա-

րունակէ Հայկական գաւառաց տեղագրու-
թիւնն, վիճակագրութիւնն, հիքեայէթներ,
գեղջիկական երգեր, բառեր և, ամիրտիեալ
իր 400 երես սլարունակող հատորի մը մէջ
լոյս տեսաւ Արամեան վայելուչ տպագրու-
թեամբ :

Կը վաճառուի ի գին 10 դրուշի բոլոր
հայ զրավաճառաց և Մաքսի կարգը թղթա-
վաճառ Պ. Զարեհ Թորոսեանի քով : Կեղրու-
նատեղին է Արամեան տպարան Պոլիս Յա-
կորեան խան :

ԿԱՐԵԻՈՐ ԱԶԴ

ՈՒՍՆՈՏՈՒԹԻՒՆ

ՄԿՆԱԶԳՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԶՂԱԶԳՈՒԹԻՒՆ
ԲՈՒՐՈՎԻՆ Կը բովում իմ դրուշեամբս

Ստակը կ'ընդունուի փորձն յաջո-
ղապէս կատարուելէ յետոյ :

Բժշկութիւն թղթակցութեամբ

ՈՒՍՈՒՑԻՉ ՏՐ. Ա.ՂԵՐ

Ֆրանսական Դիտական ընկերութեան
պատուեալ առաջին կարգի ու-
կեայ շքադրամով, վասն ար-
ժանեաց :

6, Բլաս տիւ Թրոն, Փարիզ

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱ

ԱԶԴ

Այն անձինք՝ որ Օսմանեան Կայսե-
րական Պանրային կողմէ իբր Հանրա-
յին Պարտույ Գ. Սէրիի միացեալ ար-
ժէթուղթ տրուած թիւ 11էն մինչև 155
առժամեայ անդորրագրեր ունին, կը
հրաւիրուին առաջիկայ հինգշաբթի ժա-
մը 11էն սկսեալ վերոյգրեալ անդորրա-
գրերը ներկայացնել Օսմանեան Կայ-
սերական Պանրայի գրասենեկաց եր-
կուշարթի, երեքշաբթի, չորեքշաբթի,
և հինգշաբթի օրերն առաւօտեան ժամ
10էն մինչև 2, ի փոխարէն ընդունե-
լու համար իրենց ինկած Միացեալ ար-
ժէթուղթերը :

Այս օրերէն զատ ուրիշ ատեն փո-
խանակութիւն տեղի չպիտի ունենայ :

ՏՈՔԹՈՐ Տ. ՊԱՊԱԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել Արդոյ հասարակութեան թէ՛ ամեն օր բաց ի կիւրակէ և ուրբաթ օրերէ կէս օրէն ժամ մը առաջ կը գտնուի Պահճէ Դարու ՄէրՀԱՄԵԹՃԵԱՆ դեղարանը և կէս օրէն վերջը Մեծ Մաքսատան դիմաց ԱԼԷԲԵԱՆ դեղարանը, ուր իրեն դիմող ամեն հիւանդներն և մասնաւորապէս մանկանց և միզանցքի ամեն տեսակ հիւանդութեանց ենթակայ եղողները կը դարմանէ :

Հինգշաբթի օրերը ձրի է :

ԲԺԻՇԿ ԶԱՆԻԿ ՔՐԻՍԵԱՆ

Պէշիքթաշ Զբրաղան (Թրանկայ) ճատաէսի, Փաշամահալլէ թիւ 50. — ամեն օր առաւուս և երեկոյ հիւանդ կ'ընդունի իւր տունը իսկ կիրակի օրեր ձրիաբար. — նոյնպէս ըստ առաջնոյն կը շարունակէ հիւանդ ընդունիլ Կ. Պոլիս, կամուրջի դէմ թիւ 77 ՔիիՉիԻԲԵԱՆ Եղբարց դեղարանը :

Ա.ՂՏՆԻ ՀԻԻԱՆԴՈՒԹԻԻՆԻՔ

Գրորովին կը բժշկուին խմորութեամբ, հիմնեալ գիտական նոր խուղարկութեանց վրայ, նոյն իսկ ամենէն աւելի յուսահատ պարագայից մէջ, առանց երբէք խանդարելու գործարանները: Նմանապէս կը բժշկուին երիտասարդութեան զիջաց, ջրաշիւթեան և անկողնոցութեան տխուր հետեւանքները :

Գաղտնապահութիւն երաշխաւորեալ
Կը խնդրուի հիւանդութեան ճիշդ նկատագրութիւնը շրջել :

ՏՈՔԹՈՐ ՊԵԼԼԱ

Անդամ բաղմաթիւ Գիտական
ընկերութեանց
6, Բլաս տը լա Նասիոն Փարիզ

ԾԱՂԻԿ

ԱՐԴԻ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Հաստատոյ յաշխարհիկ լեզուէ

Ի պէտս վարժարանաց

ՄԱՍՆ Բ.

ԵՐԿԱՍԻՐԵԱՅ Ե. ՄՈՒՐՏԵԱՆ

Մայրենի լեզուի և գրականութեան ուսուցման համար պատրաստուած հաւաքածոյի աշխարհմասին մէջ նշանաւոր գրական հատուածներ կան, որք ճաշակիւ կրթութեամբ համար գերազանց ուսուցիչ կրնան ըլլալ: Մասնաւորապէս ուշադրութեան արժանի են Վսեմ Գ. Օտեանի սքանչելի դրութեանը, Գեր. Ղեւոնդ Ալիշանի և Գեր. Խորէն Նար-պէյ սրբազանի Սանդուխտի հասարակութեան քերթուածոց բազմատուութիւնը, Գեր. Գ. Վ. Սրուանձտեանցի, Ամեն. Խրիմեան Սրբազանի և ուրիշ նշանաւոր հեղինակաց ընտիր գրութեանքը խնամով բացատրուած :

Կը ծախուի 3. Գալաթեան և Վ. Մարգարեան գրատուններ նաեւ ամեն Հայ գրաւաճառաց քով՝ ի գին 8 զրուշ :

Սրտօնատէր

Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻԼ ԼՐԱԳՐՈՅ